

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Տրանսպորտային Ծրագրերի Իրականացման  
Կազմակերպություն**

**ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

(Ներառյալ ընթացիկ վարկերը IBRD-82290 և IBRD-85230 և առաջարկվող՝  
լրացուցիչ ֆինանսավորում 2-ը)



**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ  
ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

Երևան  
26 փետրվարի, 2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |             |
|--|-------------|
| ԱՄՓՈՓԱԳԻՐ.....   | 4           |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....   | 5           |
| ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....   | <u>56</u>   |
| ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ<br>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԹՈՒՆՆԵՐ .....                   | 7           |
| ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.....  | 8           |
| ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԱՇՏ.....   | 13          |
| ԱՌԱՆՁԻՆ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ<br>ԶՆՆՈՒՄ.....                  | 16          |
| ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ.....  | 17          |
| ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....   | <u>2120</u> |
| ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ.....   | <u>2726</u> |
| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ.....                               | <u>2726</u> |
| Հավելված II: Ամսական դաշտային բնապահպանական վերահսկողության<br>ստուգաթերթիկ..... | <u>3837</u> |
| Հավելված III. Հանրային լսումների արձանագրություններ.....                         | <u>4139</u> |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

|             |  |
|-------------|--|
| ԼՖ          | Լրացուցիչ ֆինանսավորում  |
| ԼՖ 1        | Լրացուցիչ ֆինանսավորում 1  |
| ԼՖ 2        | Լրացուցիչ ֆինանսավորում 2  |
| ՇՄԱԳ        | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում   |
| ԲԿՇՓ        | Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթուղթ  |
| ԲՍԿՊ        | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան   |
| ԲՍԿՇՓ       | Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ                           |
| ԵՄ          | Եվրոպական Միություն  |
| ՎՋՄԲ        | Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ  |
| ՄՁԸ         | Միջազգային զարգացման ընկերակցություն   |
| ԲԿՆ         | Բռնություն կանանց նկատմամբ   |
| ԲԼԽ         | Բողոքների լուծման մեխանիզմ   |
| ԿՆՃԲ ծրագիր | Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր                                 |
| ԱՆ          | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն                                |
| ՏԿՏՏՆ       | Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն |
| ԲՆ          | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն                                |
| ՀԿ          | Հասարակական կազմակերպություն   |
| ՇՍ          | Շահագործում և սպասարկում   |
| ԳՔ          | Գործառնական քաղաքականություն   |
| ԾԻԳ         | Ծրագրերի իրականացման գրասենյակ   |
| ՀՀ          | Հայաստանի Հանրապետություն  |
| ՎԳՊ         | Վերաբնակեցման գործողությունների պլան   |
| ՎՔՇՓ        | Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ                                   |
| ՊՈԱԿ        | Պետական ոչ առևտրային կազմակերպություն  |
| ՏԾԻԿ        | Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն                                    |
| ՏԾԻԳ        | Տրանսպորտային ծրագրերի իրականացման գրասենյակ   |
| ՀԲ          | Համաշխարհային բանկ   |
| ԱՄՆ ՄՁԳ     | Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն                                |

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

2012 թվ-ին Հայաստան Հանրապետությունը ստացել է 45մլն ԱՄՆ դոլարին համարժեք վարկ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎՋՄԲ) Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի (ԿՆՃԲ ծրագիր) իրականացման համար:

Այնուհետև, Կառավարությունը դիմել է ԿՆՃԲ-ի Լրացուցիչ ֆինանսավորման համար (ԼՖ)՝ 40 մլն ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ վարկ ստանալու նպատակով: 2019 թ-ի հունվարի 31-ին ՀՀ կառավարությունը դիմել է՝ 15 մլն ԱՄՆ դոլարի չափով երկրորդ լրացուցիչ ֆինանսավորումը ստանալու համար՝ ծրագրի զարգացման արդյունավետությունն ավելացնելու նպատակով: Ակնկալվում է, որ ԼՖ-ը հնարավորություն կտա ֆինանսավորել տեղական և երկրորդական կենսական նշանակության ճանապարհների ևս 60 կմ-ի վերականգնման աշխատանքները՝ ծրագրի շրջանակներում վերանորոգվող ճանապարհների ընդհանուր երկարությունը հասցնելով 450կմ-ի (2 ընթացիկ վարկերի և առաջարկվող լրացուցիչ ֆինանսավորման միջոցով): Ծրագրի ավարտի օրը առաջարկվում է երկարացնել մինչև 2021թ-ի դեկտեմբերի 30-ը: Որպես Լրացուցիչ ֆինանսավորման մաս առաջարկվում է լրացուցիչ տեխնիկական աջակցության գործողություններ ճանապարհային անվտանգության և կլիմայադիմացկուն ենթակառուցվածքների ոլորտներում:

Լրացուցիչ ֆինանսավորման մշակման արդյունքում Ծրագրի զարգացման նպատակը (ԾՁՆ) մնում է նույնը, ինչ ԿՆՃԲ ծրագրինն էր, այն է՝ բարելավել գյուղական համայնքների մուտքը դեպի շուկաներ և ծառայություններ՝ բարեկարգելով կենսական նշանակության ճանապարհները, ինչպես նաև ավելացնել ՀՀ ՏԿՏՏՆ-ի կարողությունները կենսական նշանակության ճանապարհացանցի կառավարման հարցերում:

ԿՆՃԲ ծրագրի համար մշակված և առաջին ԼՖ-ի համար թարմացված ԲԿՇՓ-ը հիմք է հանդիսացել սույն Բնապահպանական ու սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի մշակման համար, որը նախատեսված է ԼՖ2-ի համար: Ինչպես և նախկին տարբերակները, այն ներառում է ՀԲ-ի համապատասխան քաղաքականությունների և ազգային օրենսդրության դիտարկում, որոնց հղումներ են կատարելու ծրագրի ընթացքում: Այն նաև նկարագրում է ինստիտուցիոնալ կարգավորումները: ԼՖ 2-ի ԲՍԿՇՓ ներառում է համապատասխան բաժիններ՝ անհատական ներդրումների բնապահպանական ու սոցիալական զննումների վերաբերյալ, ինչպես նաև ծրագրի հավանական ռիսկերի ու ազդեցությունների մասին ու վերջիններիս մեղմացնող միջոցառումների վերաբերյալ: Փաստաթղթում նաև կարևորվում է շահառուների հետ խորհրդատվությունները, ինչպես նաև ԼՖ 2-ի համար ԲՍԿՇՓ-ում ներառված նոր կարգավորումները, որոնք վերաբերվում են ԲԿՆ բացահայտմանն ու անդրադարձին:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետությունը մի քանի տարի է, ինչ Համաշխարհային բանկից օժանդակություն է ստանում՝ ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման նպատակով: ԿՆՃԲ ծրագիրը լրացվել է 2 ԼՖ-ով, և շարունակելու է անմիջական տնտեսական խթան հանդիսանալ գյուղական համայնքների համար՝ ապահովելով մուտքի հնարավորություն դեպի աշխատատեղեր, շուկաներ, սոցիալական ու կրթական ծառայություններ, ինչպես նաև վերակազմված կենսական նշանակության ենթակառուցվածքից երկարաժամկետ կտրվածքով օգտվելու հնարավորություններ: Ի լրումն նշված տնտեսական օգուտների (գյուղատնտեսական ապրանքների շուկաների հասանելիություն, տարածաշրջանային աշխատատեղերի ստեղծում և այլն)՝ գյուղական բնակչության համար կբարելավվեն նաև սոցիալական պայմանները՝ կրթական, բժշկական և սոցիալական ծառայությունների հասանելիության ավելացման արդյունքում:

ՀՀ ՏԿՏՏՆ-ը պատասխանատու է ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ ԼՖ-ները) ընդհանուր իրականացման համար և կիրականացնի այդ գործառույթի ամենօրյա կառավարումը ՏԾԻԿ-ին միջոցով:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ ԼՖ-ները) շրջանակներում նախատեսված բոլոր վերականգնման աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող ճանապարհների վրա և կներառեն ճանապարհահատվածների հիմնանորոգման, ծածկի վերականգնման աշխատանքները, ջրահեռացման համակարգերի վերականգնման և ճանապարհային անվտանգության ապահովման միջոցառումների իրականացումը՝ ապահովելով կայուն և հուսալի ճանապարհների առկայությունը: ԼՖ օժանդակությամբ նախատեսվող գործառույթները բնույթով և գործունեության շրջանակներով նույնն են բուն ծրագրի ներքո իրականացվողների հետ: Նրանք չեն առաջացնում ՀԲ-ի այլ անվտանգության ապահովման քաղաքականություններով կարգավորվող ազդեցություններ և Ծրագիրը մնում է բնապահպանական Բ կատեգորիայի շրջանակում: Հաշվի առնելով, որ ծրագիրը ֆինանսավորում է նմանատիպ վերականգնողական աշխատանքների իրականացումը երկրի տարբեր վայրերում, որոնց հետ առնչվող բնապահպանական ազդեցությունները նմանատիպ են, Ծրագրի բնապահպանության անվտանգության պատշաճ ապահովումը նախատեսվում է իրականացնել առկա Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի շրջանակում, որը հանդիսանում է ուղեցույց առանձին ներդրումների բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրությունների իրականացման և տեղամասին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների կազմման համար: Քանի որ աշխատանքների շրջանակը սահմանափակվում է գոյություն ունեցող ճանապարհների արդիականացմամբ, առաջարկվում է օգտագործել պարզեցված բնապահպանական կառավարման պլանի ստուգաթերթիկ:

## **ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրի մշակման նպատակը և Ծրագրի բաղադրիչները կմնան նույնը սկզբնական ծրագրի նպատակի և բաղադրիչների հետ համեմատ: Ծրագրի

մշակման նպատակն է գյուղատնտեսական ապրանքների շուկայի և ծառայությունների մատչելիության բարելավումը գյուղական համայնքների համար ընտրված կենսական նշանակության ճանապարհների արդիականացմամբ և ՏԿՏՏՆ-ի կարողությունների ամրապնդումը կենսական նշանակության ճանապարհների կառավարման գործում: Ծրագրի բաղադրիչներն են՝ ա) կենսական նշանակության ճանապարհների բարելավումը և բ) Ծրագրի կառավարումը և ինստիտուցիոնալ հզորացումը: Առաջին բաղադրիչը ներդրում կկատարի շինարարական աշխատանքներում և երկրորդ բաղադրիչը կտրամադրի տեխնիկական օժանդակություն:

Ծրագիրը ներառում է նաև արտակարգ իրավիճակների արձագանքման ենթաբաղադրիչ, որպեսզի բնական կամ մարդածին խոշոր աղետների դեպքում ՀՀ կառավարությունը կարողանա դիմի ՀԲ-ին արտակարգ իրավիճակների արձագանքման և ճանապարհների վերականգնման նպատակով Ծրագրի ֆինանսական միջոցների վերաբաշխման համար: ԿՆՃԲ ծրագրում և/կամ ԼՖ 1 կամ 2-ում ներառված լինելու դեպքում, այս ֆինանսավորման գործիքը կարող է օգտագործվել ուղորդելու լրացուցիչ ռեսուրսներ, երբ նրանք հասանելի կլինեն արտակարգ դրության արդյունքում:

Ծրագրի բաղադրիչները՝

- **Բաղադրիչ 1՝ Կենսական նշանակության ճանապարհների բարելավում:** Այս բաղադրիչը կհասցնի վերականգնվող կենսական նշանակության ճանապարհների ընդհանուր երկարությունը մինչև 450 կմ՝ ավելացնելով ծրագրի ներքո վերականգնվող ճանապարհների երկարությունը 60 կմ-ով: Անվտանգ գյուղերի ծրագիրը շարունակվելու է բոլոր այն գյուղերում, որոնք ներառված են ծրագրում: Բացի այդ, սույն բաղադրիչը կիրականացնի կլիմայի փոփոխության արդյունքների վերականգնող միջոցառումներ, ինչպես նաև վերահսկողություն ու տեխնիկական նախագծեր ճանապարհների վերականգնման համար, և հետագա ծրագրեր:
- **Բաղադրիչ 2՝ Ծրագրի կառավարում ու ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում:** Այս բաղադրիչին ավելացվելու են մի շարք ճանապարհային անվտանգության տեխնիկական աջակցության գործողություններ, ներառյալ՝ ճանապարհային պատահարների մասին տվյալների բազայի մշակում, ճանապարհային անվտանգության ազգային խորհրդի ինստիտուցիոնալ օժանդակություն, ինչպես նաև անվտանգ գյուղ ծրագրի ընդլայնում՝ կենսական նշանակության ճանապարհացանցի երկայնքում գտնվող ավելի շատ համայնքներ ներառելու նպատակով:

Առաջարկվող ծրագիրը կիրականացվի ՏԾԻԿ-ի կոմից: ՏԾԻԿ-ն ունի Համաշխարհային բանկի և այլ դոնոր կազմակերպությունների հետ աշխատելու փորձ: ՏԾԻԿ-ն ունի ծրագրի պատշաճ իրականացման՝ ներառյալ անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովման, համար անհրաժեշտ աշխատակազմ և կարողություններ: Տրանսպորտի ԾԻԿ-ը նախատեսում է օգտվել խորհրդատվական ծառայություններից ապահովելու համար Ծրագրի համապատասխանելիությունը անվտանգության ապահովման

քաղաքականությանը: Շինարարական աշխատանքների իրականացումը կվերահսկվի ՏԾԻԿ-ի կողմից ընտրված խորհրդատու կազմակերպության (Տեխնիկական վերահսկող) կողմից: Ի լրումն այլ գործառույթների, այս կազմակերպությունը կհետևի նաև շինարարական աշխատանքների իրականացման համապատասխանությանը ԲՍԿՊ-ների պահանջներին և կկատարի մեղմացնող միջոցառումների պատշաճ իրականացման մոնիտորինգ:

## **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԹՈՒՆՆԵՐ**

ԿՆՃԲ ծրագիրը գործածում է Համաշխարհային բանկի ԳՔԹ.01 «Բնապահպանական գնահատում» և համաձայն այդ քաղաքականության դասակարգվում է բնապահպանական Բ կատեգորիայի: Ծրագրով նախատեսվող աշխատանքները կունենան փոքր կամ միջին կարգի բնապահպանական և սոցիալական ռիսկեր, որոնց մեծամասնությունը կվերաբերի աշխատանքային տեղամասերին և տեղի կունենան միայն շինարարության ընթացքում: Այդ ռիսկերի արդյունավետ կառավարումը հնարավոր է մատչելի և սովորաբար կիրառվող մեղմացուցիչ միջոցառումների կիրառմամբ: ԿՆՃԲ ծրագրի ֆինանսավորումը (ներառյալ՝ ԼՖ 1 և ԼՖ 2) չի օգտագործվի բնապահպանական և սոցիալական տեսակետից բարձր-ռիսկայնության բացասական ազդեցությունունեցող գործունեության դեպքում, որոնց ազդեցությունը կարող է լինել կոմպլեքս, տարածված և երկարատև: Այսպիսի գործունեությունը դասակարգվում է բնապահպանական Ա կատեգորիա և չի կարող ֆինանսավորվել այս Ծրագրի շրջանակներում: Թիվ 4.01-ի պահանջն է, որ յուրաքանչյուր առանձին ներդրում, որը առաջարկվել է ընդգրկել Ծրագրի իրականացման պլանում, ենթարկվի բնապահպանական տեսակետից ուսումնասիրման և դասակարգման, և որ մշակվի ԲՍԿՊ՝ սահմանելով մանրամասն մեղմացուցիչ միջոցառումներ և մեղմացուցիչ միջոցառումների իրականացման մոնիթորինգի պլան ճանապարհի վերանորոգման և շահագործման փուլերում:

ԿՆՃԲ ծրագիրը գործածում է նաև Համաշխարհային բանկի Ոչ կամավոր վերաբնակեցման վերաբերյալ ԳՔ 4.12-ը, քանի որ ճանապարհի վերանորոգման համար հնարավոր է առաջանա փոքր հողակտորների ժամանակավոր կամ մշտական օտարման անհրաժեշտություն, տեղի ունենա սեզոնային մշակաբույսերի կորուստ, կամ ինքնակամ հողօգտագործման դադարեցում: Նշված դեպքերը Ոչ կամավոր վերաբնակեցման տարբեր տեսակներ են, ուստի պետք է կարգավորվեն Ոչ կամավոր վերաբնակեցման վերաբերյալ ԳՔ 4.12-ով: Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթը (ՎՔՇՓ), որը նախկինում կիրառվել է առաջին ԼՖ-ի տրամադրման ժամանակ, արդիականացվել է ԿՆՃԲ ծրագրի լրացուցիչ երկրորդ ֆինանսավորմանը համապատասխանեցնելու համար: Եթե ներդրումները ենթադրում են որևէ տեսակի ոչ կամավոր վերբնակեցում, ապա ամբողջական կամ համապատասխանեցված (պարզեցված) վերաբնակեցման գործառնական պլանի մշակման անհրաժեշտություն կառաջանա համապատասխան ՎՔՇՓ ուղեցույցների:

## ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը (ընդունվել է 1995թ. և վերանայվել 2005թ.) սահմանում է, որ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»: Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել: Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրին (ներառյալ ԼՖ 1 և 2) առնչվող օրենքների հակիրճ նկարագրությունը ներկայացված է ստորև.

### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք (2014, No ՀՕ 110-Ն)**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 2014թ-ին, սահմանում է նախագծային գործունեությանն հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի հիմնական քայլերը: Այն սահմանում է տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցվածք, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները: Գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակները ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ Ա, Բ, Գ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի:

Օրենքը նաև նախատեսում է ճանապարհների ոլորտին ուղղակիորեն առնչվող դրույթներ: Մասնավորապես, օրենքի հոդված 4-ում՝ «Փորձաքննությանը ենթակա նախատեսվող գործունեությունը», սահմանվում են նախատեսվող գործունեության այն տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Համաձայն օրենքի հոդված 14, կետ 4, ենթակետ 10)-ի՝ չորս կամ ավելի երթևեկելի գոտի ունեցող նոր ճանապարհների կառուցման կամ վերակառուցման դեպքում, կամ առավելագույնը երկու գոտի ունեցող ճանապարհների ընդլայնման դեպքում մինչև չորս կամ ավելի գոտի, երբ համապատասխան հատվածն ունի 10 կմ կամ ավել չընդհատվող երկարություն, այն դասակարգվում է որպես Կատեգորիա Ա գործողություն:

Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի, եթե այն վերաբերում է 1 կմ և ավելի երկարությամբ թունելների, մետրոպոլիտենի կամ



երկաթուղիների կառուցմանը, գետերի վրա 25 տոննա բեռնատարողությամբ կամուրջների կառուցմանը:

Փորձաքննության ենթակա են նաև ՇՄԱԳՓ-ի14-րդ հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

ՇՄԱԳՓ մասին օրենքը սահմանում է ծանուցման, փաստաթղթերի պատրաստման, հանրային լուսմների և բողոքարկման կարգը և պահանջները: Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն Պետական ոչ-առևտրային կազմակերպության կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

ՇՄԱԳՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԵԽ (EU) և ԱՄՆՄԶԳ (USAID)) բնապահպանական գնահատման մոտեցումներին: Օրենքը կիրառելի է մի շարք շինարարական աշխատանքների, ինչպես նաև զարգացման ծրագրերի համար: Այն սահմանում է նաև նախատեսվող գործունեության անդրսահմանային ազդեցությունների գնահատումը: Սահմանում է նաև հանրային հրապարակման և լուսմների կարգը: Ա և Բ կատեգորիայի գործունեությունների համար անհրաժեշտ է ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը:

ԿՆՃԲ ծրագրով (ներառյալ 2 ԼՖ-ները) նախատեսված աշխատանքները ներառելու են միայն արդեն իսկ գոյություն ունեցող ճանապարհների ծածկի վերականգնումը: Հետևաբար ՀՀ ՇՄԱԳՓ օրենքի համաձայն ՇՄԱԳ-ի և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության անհրաժեշտություն չկա:

### **Հողային օրենսգիրք (2001)**

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը: Այն տարածքները, որոնք օգտագործվում են երկաթուղու, կամուրջների և թունելների համար, ինչպես նաև հարակից անօտարելի տարածքները, համարվում են երթևեկության նպատակով օգտագործվող հողատարածքներ: Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում ավելցուկային գրունտի և շինարարական աղբի տեղադրման աշխատանքները կարգավորվում են հողային օրենսգրքով: Այս օրենքը կկիրարկվի նաև հողերի մշտական/ժամանակավոր օտարման դեպքում:

### **Թափոնների մասին օրենք (2004)**

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները: Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Թափոնների մասին օրենքը հողային օրենսգրքի հետ միասին կկիրարկվի ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) իրականացման հետևանքով առաջացած ավելցուկային գրունտի և շինարարական աղբի տեղադրման աշխատանքների դեպքում:

### **Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքները ենթակա են վերահսկողության Բնապահպանական պետական տեսչության կողմից ապահովելու համար համապատասխանելիությունը բնապահպանական օրենսդրության պահանջներին:

### **Ավտոմոբիլային ճանապարհների մասին օրենք (2006)**

Օրենքը կարգավորում է ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման և կառավարման համար տնտեսական, իրավական և կազմակերպչական դաշտերը; Հայաստանի Հանրապետության ճանապարհների նախագծումը, շինարարությունը, վերանորոգումը և պահպանումը, դասակարգումը և գրանցումը, ինչպես նաև կարգավորում է իրավական հարաբերությունները այդ ֆունկցիաները իրականացնող ղեկավար մարմինների և կազմակերպությունների միջև:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում վերականգնվող ճանապարհների նախագծման, որակի հսկման և հետագա շահագործման աշխատանքները կարգավորվում են Ավտոմոբիլային ճանապարհների մասին օրենքով:

Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող գործող իրավական շրջանակը ներառում է բազմապիսի իրավական փաստաթղթեր: Կառավարության որոշումները հանդիսանում են շրջակա միջավայրին առնչվող օրենքների իրականացումն ապահովող հիմնական գործիքները: Շրջակա միջավայրի ոլորտը նույնպես կարգավորվում է Նախագահի հրամանագրերով, Վարչապետի որոշումներով և նախարարների հրամաններով:

### **Միջազգային համաձայնագրեր**

Ի լրումն բնության պահպանությանն առնչվող վերոնշյալ օրենքների ցանկի և հակիրճ նկարագրությանը, բազմաթիվ ռազմավարությունների, հայեցակարգային փաստաթղթերի և ազգային ծրագրերի Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Ստորև բերված ցանկը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված այն կոնվենցիաները և արձանագրությունները, որոնք առնչվում են ԿՆՃԲ ծրագրին (ներառյալ 2 ԼՖ-ները).

- Կենսաբազմազանության մասին Կոնվենցիան (Ռիո-դե-ժանեյրո, 1992թ.),
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու-Յորք, 1992թ.) և Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.),
- ՄԱԿ-իԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998թ.):

### **Թույլտվություններ**

ԿՆՃԲ ծրագրով (ներառյալ 2 ԼՖ-ները) նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բնապահպանական թույլտվությունները՝ ներառյալ դրանց տրման համար պատասխանատու մարմինները և ստացման մոտավոր ժամկետները ամփոփված են ստորև բերված աղյուսակում.

| Թույլտվության անվանումը   | Թույլտվություն տրամադրող մարմինը                                  | Թույլտվության ստացման ժամկետը   |
|---|---|---|
| Շինարարության լիցենզիա  | Քաղաքաշինության պետական կոմիտե                                    | Նախագծային փուլից հետո, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը   |
| Պետավտոտեսչության թույլտվություն                                  | ՀՀ Ճանապարհային ոստիկանություն                                    | Նախագծային փուլի ժամանակ, երթևեկության կառավարման պլանի հաստատում   |
| Շինարարության թույլտվություն                                      | Համապատասխան համայնքի ղեկավար                                     | Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը   |
| Շինարարական հրապարակի վարձակալության կամ սեփականության փաստաթղթեր | Սեփականատեր   | Շինարարական հրապարակ հիմնելուց առաջ   |
| Հանքարդյունաբերության լիցենզիա*                                   | ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն | Շինարարական փուլի ժամանակ   |
| Խճի գնման դեպքում առքուվաճառքի փաստաթղթեր                         | Հավաստագրված վաճառող  | Շինարարական փուլի ժամանակ՝ խճի գնման դեպքում  |
| Սահմանայի նթույլատրելի արտահոսքի թույլտվություն                   | ՀՀ Բնապահպանության նախարարություն                                 | Շինարարական փուլի ժամանակ   |
| Շինարարական թափոնների տեղադրման համաձայնություն                   | Համապատասխան համայնքի ղեկավար                                     | Շինարարական թափոնների տեղադրումից առաջ, աշխատանքների ավարտի սերտիֆիկատի ներկայացումից առնվազն 3 ամիս առաջ |

\* Շինարարական նյութերի գնման դեպքում հանքավայր շահագործողը պետք է ունենա ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրված համապատասխան թույլտվություն:

Բոլոր վերոնշյալ թույլտվությունները առնչվում են ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) իրականացմանը, սակայն դրանցից որոշները կարող են անհրաժեշտ չլինել՝ կախված աշխատանքների բնույթից և կազմակերպումից (օրինակ՝ խճի գնման դեպքում կապալառուն պարտավոր չէ ներկայացնել հանքարդյունաբերության լիցենզիա, սակայն խիճ արտադրող ընկերությունը պետք է ունենա գործող հանքարդյունաբերության լիցենզիա):

**Սոցիալական օրենսդրություն**

## **Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենք (2006թ.)**

Օրենքը կարգավորում է հողի օտարման ընթացակարգերը և հողի գրանցված և անշարժ գույքի սեփականատերերի փոխհատուցում ստանալու իրավունքները՝ հանրային նպատակով դրանց օտարման դեպքում:

Օրենքը կկիրառվի, եթե ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում հողերի մշտական կամ ժամանակավոր օտարման անհրաժեշտություն կառաջանա:

## **ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԱՇՏ**

Սույն բաժնում հակիրճ ամփոփված են բնապահպանության, սակայն ոչ միայն այդ տեսանկյունից, ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) իրականացմանը հնարավոր առնչություն ունեցող պետական մարմինների գործառույթները:

### **Բնապահպանության նախարարություն**

Բնապահպանության ԲՆ-ը պատասխանատու է ՀՀ-ում բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերականգնման, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ բնագավառներում ԲՆ իրավասությունը ներառում է ազգային քաղաքականության վերահսկում, բնապահպանական ստանդարտների ու ուղեցույցերի մշակում և պարտադրում: ԲՆ-ը իրականացնում է այս գործառույթները նախարարության կազմում գտնվող վեց վարչությունների օգնությամբ, 4 առանձին բաժինների ու գործակալությունների միջոցով, ինչպես նաև երկու ինքնակառավարվող ստորադաս մարմինների միջոցով:

Թեև ԿՆՃԲ ծրագիրը (ներառյալ 2 ԼՖ-ները) ենթակա չէ բնապահպանական փորձաքննության և ծրագրի իրականացմանը համար ոչ մի հատուկ պայմաններ նախատեսված չեն բնապահպանական տեսանկյունից, ԲՆ-ը իր կազմում գործող Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի միջոցով կվերահսկի ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) աշխատանքները ապահովելու համապատասխանելիությունը բնապահպանական նորմերին և ստանդարտներին:

### **Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն**

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառում: ԷԵԲՊՆ-ը իրականացնում է բնական ռեսուրսների կառավարման գործառույթները՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի միջոցով, որը ստեղծվել է ՀՀ տեսչական մարմնների մասին օրենքի հիման վրա՝ ԲՆ-յան Բնապահպանական տեսչության, ինչպես նաև ԷԵԲՊՆ-յան Հանքարդյունաբերության տեսչության վերակազմավորման արդյունքում: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ենթակա է կառավարության հսկողությանը, վերահսկողությանը և օրենքով սահմանված այլ գործառույթներին, որը, օրենքին համապատասխան,

պատժամիջոցներ է սահմանում/պատասխանատվության միջոցներ է ձեռնարկում բնապահպանության ու հանքարդյունաբերության ոլորտներում:

Նոր հանքահորերի բացման կամ գոյություն ունեցողների շահագործման դեպքում ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շինարարական աշխատանքները իրականացնող կազմակերպությունը պետք է ձեռք բերի շահագործման համար անհրաժեշտ թույլտվությունները ԷԵԲՊՆ -ից:

### **Առողջապահության նախարարություն**

Առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունն առողջապահության ոլորտում: ԱՆ-ը իրականացնում է այն գործառույթները, որոնք վերաբերվում են առողջապահության կառավարման քաղաքականության իրականացման զարգացմանն ու կազմակերպմանը, սանիտարական նորմերի ու կանոնների մշակմանն ու հաստատմանը, առողջապահության ոլորտին առնչվող օրենքների ու կարգավորումների նախագծմանն ու վերահսկողությանը:

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը իրականացնում է իրեն վստահված վերահսկողական գործառույթներ: Գործելով ՀՀ անունից, տեսչությունը կարող է իրականացնել պատժամիջոցներ առողջապահական նորմերի, աշխատանքի պաշտպանության և աշխատանքնային օրենսդրության ստանդարտների և դրույթների խախտումների դեպքում:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) գործունեությունը ենթակա է վերահսկման առողջապահական պետական տեսչության կողմից, ապահովելու Ծրագրի համապատասխանելիությունը ազգային սանիտարա-հիգիենիկ նորմերին:

### **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը տեղական կառավարման և զարգացման բնագավառներում, ու մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մոնիթորինգ է իրականացնում:

Նախարարությունը նաև ուղղորդում է մարզային և տեղական կառավարման մարմինների աշխատանքը: Մարզպետարանները (տարածքային կառավարման մարմինները) պատասխանատու են իրենց իրավասության տակ գտնվող տեղական նշանակության ընդհանուր օգտագործման ճանապարհների կառավարման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները) իրականացնում են որպես համայնքի սեփականություն գրանցված տեղական նշանակության ընդհանուր օգտագործման ճանապարհների կառավարումը:

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ներ) շրջանակներում կվերականգնվեն մարզպետարանների կամ համայնքների իրավասությունների տակ գտնվող

ճանապարհները, որոնք գտնվում են Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հսկողության ներքո:

### **Արտակարգ իրավիճակների նախարարություն**

ԱԻՆ-ը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունները՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում: ԱԻՆ-ի կազմում գործող մարմիններից է Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ՊՈԱԿ-ը, որը Հայաստանի օդերևութաբանական ու հիդրոլոգիական պայմանների կանոնավոր մոնիտորինգ է իրականացնում՝ իր օդերևութաբանական ու հիդրոլոգիական կայանների միջոցով:

### **Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն**

ՀՀ ՏԿՏՏՆ-ը գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Նախարարության կազմում գործող ճանապարհային ոլորտին առնչվող հիմնական ստորաբաժանումն է հանդիսանում Ճանապարհինական վարչությունը, որը հիմնականում պատասխանատու է հանրապետության ճանապարհային ցանցի բարելավմանը և հետագա զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման համար:

ՏԿՏՏՆ-ն ԿՆՃԲ ծրագիր (ներառյալ 2 ԼՖ-ները) իրականացնողն է:

**Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակը** հիմնվել է 2007 թ-ին: , Այն հանդիսանում է ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող Կենսական նշանակության ճանապարհների բարեկարգման ծրագիրն (ԿՆՃԲ)<sup>1</sup> իրականացնող կազմակերպություն: Այն նպատակ ուներ բարելավել ընտրված շրջանների կենսական նշանակության ճանապարհները, ստեղծել աշխատատեղեր ճանապարհաշինության ոլորտում և բարելավել մուտքի հնարավորությունը դեպի շուկաներ: 2015թ-ի հուլիսին ԿՆՃԲ ծրագիրը ստացել է 40 մլն ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ ֆինանսավորում՝ ֆինանսավորելու համար ծրագրի ընդլայնվող գործողությունները:

### **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ**

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ-ը հիմնվել է ՏԿՆ-ի կազմում 2010 թ-ի

<sup>1</sup> Ծրագիրը մեկնարկվել է 2009թ-ին և փակվել է՝ 2013թ-ի դեկտեմբերին:

մարտի 11-ին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 446 որոշումը, և հանդիսացել է որպես Ծրագիրն իրականացնող մարմին (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ):

### **Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն**

Համաձայն ՀՀ կառավարության թիվ 1304-Ա որոշման, առ 15 դեկտեմբեր 2016թ.՝ տեղի է ունեցել Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ-ի միացում, որի արդյունքում հիմնվել է ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը 2017թ-ի մարտի 1-ին՝ ըստ ՏԿՏՏՆ թիվ 217-Ա հրամանի:

Կազմակերպությունը հանդիսանում է ՏԾԻԿ ՊՀ-ի և ՀՀԾՄՆԾ ՊՈԱԿ-ի իրավահաջորդը: Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է ապահովել ՀՀ տրանսպորտային ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Ներկայումս ՏԾԻԿ-ը կառավարում է ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) ամենօրյա համակարգումը, իրականացումը, մոնիտորինգը և վարչական գործողությունները: ՏԾԻԿ-ում ներգրավված են համապատասխան մասնագետներ, ովքեր պատասխանատու են Ծրագրի բոլոր բնապահպանական ու սոցիալական ասպեկտների կառավարման համար:

ՏԾԻԿ-ը պատասխանատու է ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ընթացիկ վարկերը և առաջարկվող լրացուցիչ ֆինանսավորումը) ամենօրյա կառավարման համար, ներառյալ պլանավորումը, համակարգումը, վերահսկումը, կառավարումը և հաշվետվողականությունը:

### **ԱՌԱՆՁԻՆ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ**

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում ֆինանսավորման ենթակա առաջարկված առանձին ներդրումների բնապահպանական և սոցիալական ստուգման հիմնական նպատակն է՝ գնահատել ռիսկերի բնույթը և շրջանակը՝ կապված առաջարկվող ճանապարհների վերականգման և շահագործման հետ, նաև դասակարգել յուրաքանչյուր գործունեությունը համապատասխան բնապահպանական կատեգորիայի ըստ ՀԲ ԳԲ 4.01 և ՀՀ ՇՄԱԳՓ օրենքի: ՀԲ ԳԲ 4.01 բնապահպանական դասակարգմամբ հաստատվում է առաջարկվող ներդրումների իրավունակությունը, քանի որ միայն Բ կատեգորիայի գործունեությունները կարելի էն օժանդակվել ԿՆՃԲ ծրագրով, մինչդեռ Ա կատեգորիայի գործունեությունները կբացառվեն:



Բնապահպանական և սոցիալական ստուգման իրականացման մեկ այլն նպատակ է ոչ կամավոր վերաբնակեցման հնարավոր ազդեցության բացահայտումն և ՎԳՊ մշակումը:

Իրավասու ներդրումների բնապահպանական և սոցիալական ստուգումը հիմք է դիսկերի և ակնկալվող բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունների հիման վրա տեղամասին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների մշակման համար, որը մանրամասն տեղեկություն կտրամադրի ազդեցությունների տեսակների և շրջանակի վերաբերյալ, կնկարագրի մեղմացուցիչ միջոցառումները և այդ միջոցառումների մոնիթորինգի իրականացման կարգը:

## **ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ**

Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ տեղական ճանապարհների վերականգնման աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված: Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների ճնշող մեծամասնությունը կդիտարկվի շինարարական/վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում: Ընդհանուր առմամբ, շրջակա միջավայրի վրա երկարաժամկետ ազդեցությունը աննշան է և երկարաժամկետ սոցիալական ազդեցությունը դրական ի շնորհիվ ճանապարհային պայմանների բարելավման և տեղական համայնքների հասանելիության բարձրացմանը:

### **Լանդշաֆտի դեգրադացիա, ապարների քայքայում և հողատարում:**

Ազդեցությունը լանդշաֆտի վրա ակնկալվում է որ կլինի ոչ էական, քանի որ շինարարական աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող ճանապարհների վրա: Հողատարման պրոցեսների ենթակա բազմաթիվ տարածքներ կան հանրապետությունում: Հողային աշխատանքները, հատկապես լանջերին, կարող են առաջացնել հողի էրոզիա/փլուզում կամ վատթարացնել ընթացիկ գործընթացները: Բնական երկրաֆիզիկական գործունեության հետևանքով, որին ավելանում է Հայաստանի տեղակայությունը սեյսմիկ գոտում, շատ ճանապարհներ սովորաբար ենթարկվում են/հակված են քայքայման ու փլուզման: Նման դեպքերը բնորոշ են լեռնային շրջաններին՝ ժայռային ու զառիվար լանջերի պատճառով: Դա պայմանավորված է նաև նախկինում ճանապարհաշինության ընթացքում կիրառվող ինտենսիվ հանույթի ու պայթեցման աշխատանքներին, ինչը հանգեցրել է ժայռային լանջերի թուլացմանը: Ժայռերի փլուզումները կարելի է խթանել մի շարք գործոններով, ներառյալ գրունտի սեյսմիկ շարժումը, անձրևը, սառելը/հալվելը և ժայռային զանգվածի դեգրադացիան: Ուստի, չնայած Ծրագիրը չի անդրադառնում լանջերին, փլուզումների ռիսկեր կարող են լինել, որոնք կարող են վտանգ

ներկայացնել աշխատողների ու մեքենաների համար շինարարության ու շահագործման փուլերում:

**Աղտոտում շինարարական հրապարակներից եկող հոսքերով:**

Վառելիքի/քսայուղերի հոսակորուստը սարքավորումներից և պահեստավորված ասֆալտը, նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են աղտոտել հողը, ներթափանցել ստորգետնյա ջրերի մեջ կամ արտահոսել դեպի մակերևութային ջրեր: Տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն և լվացումը գետերի և առուների մոտակայքում կարող է առաջացնել ջրերի աղտոտում: Շինարարական ճամբարների սանիտարական հարմարությունները նույնպես կարող են աղտոտել շրջակա միջավայրը:

**Ծրագրի իրականացման տարածքի կենսաբազմազանության վրա ազդեցություններ:**

Շինարարական աշխատանքների ընթացքում ճանապարհի ծրագծի ուղղության և ճանապարհի կողնակների կարգավորման նպատակով հողային աշխատանքները կարող են վնաս հասցնել բուսածածկույթին: Հողահանումը, շինանյութերի հանքահանումը, ավելցուկային գրունտի և շինարարական աղբի տեղադրումը կարող են անհանգստացնել կենդանիներին: Սակայն, քանի որ աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող ճանապարհների ծրագծից աննշան շեղումներով, ուստի կենդանական և բուսական աշխարհի վրա էական ազդեցություններ չեն սպասվում:

**Աղմուկի, թրթռումների և ժամանակավոր օդի աղտոտում:**

Փոշու առաջացման աղբյուր կարող է հանդիսանալ շինարարական նյութերի տեղափոխումը և բեռնատարների տեղաշարժը: Ճանապարհաշինարարական աշխատանքներից առաջացած փոշին և բիտումի ծուխը կլինեն տեղայնացված և ժամանակավոր բացասական ազդեցություն կթողնեն մթնոլորտի/օդի որակի վրա: Շինարարական սարքավորումների շահագործումից և ծանր բեռնատարների երթևեկությունից առաջացած աղմուկը և թրթռումը կանհանգստացնեն տեղական համայնքների բնակիչներին, երբ աշխատանքները կիրականացվեն բնակավայրերի անմիջական հարևանությամբ:

**Փորված նյութերի և շինաղբի առաջացում:**

Փորված նյութեր և շինաղբի առաջացում կարող է առաջանալ ճանապարհների վերանորոգման ընթացքում: Այն կարող է բաղկացած լինել քանդված ասֆալտե սալահատակի բեկորներից, բետոնյա մնացորդներից, ռելսերից և այլն: Ավելցուկային գրունտ, քարաբեկորներ, հանված ծառեր, թփեր կամ ճյուղեր, և կենցաղային աղբ կառաջանա աշխատուժի և շինարարական ճամբարների առկայության հետևանքով:

**Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ:**

Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման ժամանակ լուրջ վտանգներ չեն սպասվում, քանի

դեռ պահպանվում են շինարարական աշխատանքների կատարման և անվտանգության ապահովման պատշաճ կանոնները: Վերակառուցված ճանապարհի շահագործման փուլում բացասական ազդեցություն կարող է առաջանալ երթևեկության թույլատրելի արագության գերազանցման արդյունքում: Թույլատրելի արագության բարձրացումը և ճանապարհային երևելիության ծավալների աճը կարող են նպաստել ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի ավելացմանը:

**Ոչ կամավոր վերաբնակեցում.** Քիչ հավանական է, որ ճանապարհի վերականգնման աշխատանքները ոչ կամավոր վերաբնակեցման հանգեցնեն (օրինակ՝ փոքր հողակտորների ձեռքբերման անհրաժեշտություն, մասնավոր սեփականության ժամանակավոր կամ մշտական սահմանափակում, մշակաբույսերի սեզոնային կորուստ կամ հողօտգազործողների կողմից հողի ոչ պաշտոնական օգտագործման դադարեցում), քանի որ ընտրված ճանապարհները պահպանում են առկա ճանապարհների ծրագիծը, իսկ փոփոխվում է միայն ճանապարհի և/կամ մայրերի լայնությունը, անհրաժեշտության դեպքում, խուսափելու համար որևէ սեփականության վնասելուց կամ որևէ գույքի վրա բացասական ազդեցությունից: Այնուամենայնիվ, նախկին ՎԲՇՓ-ը վերանայվում է որպես նախազգուշական միջոց: Եթե որևէ մասնավոր ներդրում հանգեցնի ոչ կամավոր վերաբնակեցման, պետք է մշակվի ամբողջական կամ պարզեցված Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ):

**Այլ Սոցիալական ազդեցություն:** Սոցիալական բացասական ազդեցությունները շինարարության փուլում ակնկալվում են, որ կլինեն աննշան, սահմանափակվելով աղմուկից, թրթռումից և երթևեկության ընդհատումներից պատճառված անհարմարություններով բնակավայրերի անմիջական հարևանությամբ բնակվող տեղական համայնքների բնակիչներին: Աշխատանքները կարող են նաև սահմանափակել բնակիչների մուտքը իրենց բնակարաններ, հողամասեր, արոտավայրեր և/կամ այլ մասնավոր կամ համայնքային սեփականություններ: Տեղի բնակիչները հնարավոր է, որ բավարար չտեղեկացվեն սպասվող աշխատանքների, համայնքային ծառայությունների և կապի միջոցների ժամանակավոր ընդհատումների վերաբերյալ: Հնարավոր է, որ ազդեցության ենթարկված քաղաքացիները տուժեն շինարարների ոչ պատշաճ վարքից կամ նկատելով իրականացվող աշխատանքների բացասական ազդեցությունները տեղյակ չլինեն ինչպես բարձրաձայնել այդ մասին: Շինարարության ընթացքում հնարավոր սոցիալական դրական ազդեցություն է շինարարական կազմակերպությունների կողմից տեղի բնակչության ժամանակավոր աշխատանքով ապահովումը: Սակայն, շինարարական կազմակերպությունները հավաքագրելով տեղի չմասնագիտացված աշխատուժը կարող են խտրականություն ցուցաբերել սեռական և էթնիկ նկատառումներից ելնելով:

Թև **գեներայի ին հիմքով բռնությունը (ԳՅԲ) Յայ աստանում մնում է** կարևորագույն խնդիրներից մեկը, հանրային մակարդակում այն դեռևս պատշաճ ճանաչում չի ստացել: Խնդիրների թվում կարելի է նշել ազգային օրենսդրության մեջ խտրականության և կանանց նկատմամբ բռնության սահմանման և արձագանքման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը տարբեր ոլորտներում: Կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում դժվար է չափել՝ խնդրի թագնված բնույթի և թերի հրապարակման պատճառով: Ըստ Կանանց նկատմամբ բռնության ՄԱԿ-ի համաշխարհային տվյալների շտեմարանի մշտական ֆիզիկական եւ (կամ) սեռական զուգընկերոջ կողմից բռնության ցուցանիշը Հայաստանում կազմում է 8%, մինչդեռ ֆիզիկական եւ (կամ) սեռական զուգընկերոջ կողմից բռնությունը 2017 թ-ին կազմել է 4%: Իսկ կյանքի ընթացքում ոչ զուգընկերոջ կողմից սեռական բռնություն վերաբերյալ պաշտոնական ազգային վիճակագրություն առկա չէ:

**2017 թ. դեկտեմբերի 13-ին Կառավարության 1433-Ա հրամանագրով ՀՀ կառավարությունը ընդունել է «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց սոցիալական աջակցության և ընտանեկան խաղաղության վերականգնման մասին» օրենքը:**

Ներկայումս, Վարչապետի որոշմամբ, գործողությունների ծրագրի հիման վրա համապատասխան շահագրգիռ կողմերը մշակում են բոլոր անհրաժեշտ իրավական ակտերի թվում ընթացակարգային կանոնակարգերը՝ օրենքի անխափան իրականացումը ապահովելու համար: Այս պահին Հայաստանում դեռևս չկա ԳՀԲ դեպքերի համակարգված ուղղորդման մեխանիզմ, որը նախատեսում է պարտականությունների հստակ սահմանում, տվյալների հավաքագրման հստակ ընթացակարգեր, փաստաթղթագրում և համագործակցություն բոլոր ներգրավված հաստատությունների միջև: Վերը նշված օրենքի ընդունումից հետո պետությունը պարտավոր է ընդունել ընտանեկան բռնության զոհերին ծառայություն մատուցելու ուղղորդող մեխանիզմը:

Բացի ծառայություն մատուցողների կողմից գործառույթների կրկնությունը, զգալի բացը կա ծառայություն մատուցողների (օր., սոցիալական աշխատողների, առողջապահական ոլորտի աշխատողների, առանձին դեպքերի հետ աշխատողների եւ այլն) մասնագիտական կարողությունների հետ կապված: Պետության կողմից մատուցվող ծառայություններից բացի, կան կանանց/երեխաների/բռնության ենթարկված անձանց հետ աշխատող հասարակական կազմակերպություններ: Նրանց որակը և ծածկույթը տարբեր են: Մի շարք մարզերում (օրինակ, Վայոց Ձոր, Արարատ, Արագածոտն) ՀԿ-ները շատ քիչ են կամ ընդհանրապես բացակայում են:

**Սոցիալական Երկարաժամկետ ազդեցությունը** կլինի դրական: Բարելավված ճանապարհները հնարավորություն կնձեռնեն տնտեսության զարգացման և երիտասարդ աշխատուժի արտագաղթի նվազեցման համար: Վերականգնված ճանապարհների շնորհիվ կաճի տեղական մթերքների մուտքը դեպի շուկաներ,

ինչը կնպաստի գյուղատնտեսական սեկտորի, զբոսաշրջության և որոշ դեպքերում՝ տեղական արդյունաբերության զարգացմանը: Բացի այդ բարելավված ճանապարհները նոր աշխատատեղերի բացման հնարավորություններ կստեղծեն: Տնտեսության զարգացման շնորհիվ կավելանան ներդրումները էներգետիկայի, հեռահաղորդակցման, կրթության, հանրային առողջության, մշակույթի, ժամանցի և այլ բնագավառներում: Վերականգնված ճանապարհների արդյունքում կնվազեն նաև տրանսպորտային միջոցների շահագործական ծախսերը, որը նույնպես տնտեսապես դրական ազդեցություն կունենա մեքենաների սեփականատերերի վրա: Բացասական ազդեցությունը կարող է ավելանալ ճանապարհատրանսպորտային պատահարների թվի աճի հետ, որոնց պատճառ կարող է հանդիսանալ վերականգնված ճանապարհով երթևեկության թույլատրելի արագության գերազանցումը, ճանապարհների որակի բարելավումից հետո:

**Ազդեցություններ պատմամշակութային և հնէաբանական հուշարձանների վրա:** Ծրագրի իրականացման ընթացքում չեն ակնկալվում որևէ ազդեցություններ պատմամշակութային և հնէաբանական հուշարձանների վրա, քանի որ աշխատանքների մեծամասնությունը կրելու է գործող կառույցների վերականգնման բնույթ Այնուամենայնիվ, հողային աշխատանքները կիրականցվեն հնարավոր պատահական գտածոները չվնասելու միտումով:

## **ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) ակնկալվող բնապահպանական և սոցիալական ռիսկերը հիմանականում փոքր կամ միջին կարգի են: Այնուամենայնիվ մեղմացուցիչ միջոցառումների կիրառումը կարևոր է այդ ռիսկերը կառավարելու և բացասական ազդեցությունները նվազեցնելու համար:

Ներկա ԲՍԿԾ փաստաթուղթը ներկայացնում է մեղմացուցիչ միջոցառումների ընդհանրական նկարագրությունը, որոնք կիրառելի են նախագծման, շինարարության և շահագործման փուլերի համար: Համապատասխան միջոցառումները մանրամասն կներկայացվեն յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար մշակվելիք Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններում, երբ մանրամասն նախագծերը ճանապարհների առանձին հատվածների համար հասանելի կլինեն:

### **Նախագծման փուլ**

Ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը և վտանգավորության աստիճանը կարելի է նվազեցնել՝ վտանգավոր հատվածներում տեղադրելով բաժանիչ արգելապատեր, երթևեկությունը դանդաղեցնելու համար նախատեսված ճանապարհի լայնքով տեղադրվող թմբիկներ, ոլորաններում՝ ուղղորդայուններ, երթևեկության նոր նշաններ և կատարելով ճանապարհային նշագծումներ: Որոշ

վայրերում պետք է դիտարկվի նաև զառիթափերի/ թեք լանջերի ամրացում գաբիոնների միջոցով:

### **Ապարների քայքայման գնահատում և մեղմացնող միջոցներ**

Նախագծող խումբը պետք է գնահատի ժայռային զանգվածի հնարավոր փլուզումների ռիսկերը Ծրագրի իրականացման ընթացքում ընտրված ճանապարհահատվածների վրա, ինչպես նաև այդ ռիսկի ավելացման հնարավորությունը շեփի կտրման արդյունքում, եթե դա նախագծի մաս է հանդիսանում ճանապարհի պաստառի հետ ստանդարտացման նպատակով: Եթե պարզվի, որ հավանական փլուզումները, և/կամ դրանց բացասական հետևանքները, միջինից բարձր են, ապա նախագիծը պետք է մեղմացնող միջոցներ ներառի:

### **Շինարարության փուլ**

#### **Կենսաբազմազանության վրա ազդեցությունների նվազեցում**

Շինարարական կազմակերպությունները աշխատանքները պետք է իրականացնեն հնարավորինս նվազեցնելով ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի տեղաշարժը կթույլատրվի միայն վերանորոգվող ճանապարհի երկայնքով կամ այդ նպատակով նախատեսված ճանապարհներով խուսափելու համար աշխատանքներն իրականացող տեղամասի շրջակայքի բուսածածկույթի վնասումից: Եթե ծառերի հատումն և հեռացումը իրացման գոտում անհրաժեշտ են ճանապարհի ծրագծի ուղղության և ճանապարհի կողնակների կարգավորման նպատակով, կամ տեխնիկայի շահագործման անհրաժեշտ տարածքի ապահովման համար, ապա հատումները պետք է իրականացվեն խիստ հսկողության պայմաններում, խուսափելու համար անտեղի հատումներից և այլ մոտակայքի ծառերին անտեղի վնասներ պատճառելուց: Շինարարական ճամբարների հիմնման անհրաժեշտության դեպքում դրանց հիմնման համար պետք է ընտրվեն համեմատաբար նոսր բուսածածկույթով տարածքներ:

#### **Թափոնների կառավարում**

Հատուկ տարածքներ պետք է ընտրվեն տեղում թափոնների տեղադրման համար: Վտանգավոր թափոնները պետք է կուտակվեն քանդված և ավելցուկային գրունտից, ինչպես նաև այլ ոչ վտանգավոր թափոններից առանձին: Պաշտոնական համաձայնագրեր պետք է ստացվեն համապատասխան պատկան մարմիններից թափոնների վերջնական տեղադրման, թափոնների վերամշակման կամ աղբահանության համար:

#### **Հողի և ջրի աղտոտման կանխարգելում**

Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների սպասարկումն ու վառելիքի լիցքավորումը պետք է իրականացնել համապատասխան սպասարկման կետերում և լցակայաններում: Տեղում իրականացնելու դեպքում անջրանցիկ

մակերևույթ պետք է ապահովվի վառելիքի լիցքավորման համար և կլանող նյութեր պահեստավորվեն վթարային արտահոսքերի դեպքում օգտագործելու համար: Տեխնիկայի լվացումը պետք է արգելվի մակերևույթային ջրերի մոտ: Օգտագործված քսայուղերը, վառելիքով և քսայուղերով լի տարաները և այլ վտանգավոր նյութեր պետք է պահեստավորվեն անջրաթափանց մակերևույթների վրա, ծածկի տակ և հեռու կրակի աղբյուրներից: Շինարարական ճամբարներում բանվորների կեցության հարմարությունների ստեղծման դեպքում անհրաժեշտ է տեղադրել սեպտիկ բաքեր կամ ասիական զուգարաններ և կանխել կեղտաջրերի հոսքը դեպի մակերևույթային ջրեր, ինչպես նաև սանիտարական պայմանների վատթարացումը:

### **Հողատարման կանխում**

Հողային աշխատանքները ճանապարհի երկայնքով և հանքահորերում կարող են տևել բավականին երկար ժամանակ: Տոփանման, լանդշաֆտային և վերականգնման աշխատանքները պետք է անհապաղ իրականացվեն հողի քանդման յուրաքանչյուր վայրում աշխատանքների ավարտից հետո, չհետաձգելով մինչև ամբողջ աշխատանքների ավարտը: Անկայուն շեպերի ամրացման, գաբիոնների տեղադրման, դրենաժների անցկացման, մշակաբույսերի ցանման կամ տնկման աշխատանքներ պետք է իրականացվեն կանխելու հողատարումը: Բուսահողը պարտադիր պետք է հեռացվի քանդվող գրունտի վրայից և ժամանակավոր տեղադրվի առանձին, որպեսզի արդյունավետ օգտագործվի տեղանքի վերականգնման ընթացքում և հնարավորություն տա բուսականությանը բնական ճանապարհով վերականգնելու օգտագործված տարածքները: Կքաջալերվի գոյություն ունեցող հանքահորերի շահագործումը նվազեցնելու համար շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

### **Պատահական գտածոներ**

Եթե պատահական գտածոներ հայտնաբերվեն հողային աշխատանքների ընթացքում, ապա շինարարական կազմակերպությունը պետք է անմիջապես դադարեցնի աշխատանքները տվյալ տեղում և ծանուցի այդ մասին ՏԾԻԿ-ին: ՏԾԻԿ-ը պետք է գտածոի մասին տեղեկացնի Մշակութային արժեքների պահպանության գործակալություն և չչարունակի աշխատանքները մինչ գրավոր թույլտվություն չստանա Մշակութային արժեքների պահպանության գործակալությունից աշխատանքները վերսկսելու համար:

### **Աշխատանքային տեղամասի անվտանգության ապահովում**

Ազդանշանային համակարգեր և համապատասխան նշաններ պետք է տեղադրվեն վերանորոգվող ճանապարհների վրա: Երթևեկության կարգավորման լրացուցիչ միջոցների կարիք կարող է առաջանալ որոշ հատվածներում: Թափոնների և նյութերի կուտակման, շինարարական ճամբարների և ճանապարհային մուտքերի տեղերը պետք է սահմանազատվեն: Աշխատանքները պետք է պլանավորվեն և իրականացվեն այնպես, որ երթևեկությանը պատճառվող անհարմարությունները և ռիսկերը հասցվեն նվազագույնի: Շինարարություն իրականացնող անձնակազմը և աշխատուժը պետք է ապահովվեն արտահագուստով և անձնական պաշտպանության պարագաներով: Շինարարական տեխնիկան կառավարող

անձնակազմը և բեռնատարների վարորդները պետք է ունենան համապատասխան տեխնիկան շահագործելու իրավունք/լիցենզիա/:

### **Տեղական համայնքներին պատճառվող անհարմարությունների կառավարում**

Տեղական համայնքները նախորոք պետք է տեղեկացված լինեն պլանավորված աշխատանքների գրաֆիկի և շրջանակների մասին: Եթե ճանապարհի վերանորոգումը ժամանակավորապես ընդհատի կապը կամ կենցաղային սպասարկման ծառայությունները, ապա սպառողները պետք է այդ մասին տեղեկացվեն կանխավ: Եթե աշխատանքները իրականացվեն բնակավայրում կամ բնակավայրի անմիջական հարևանությամբ, ապա աշխատանքային ժամերը պետք է խստորեն սահմանափակվեն ցերեկային ժամերով և փոշու դեմ պայքար իրականացվի շինարարական տարածքի ջրման միջոցով: Հատուկ նշաններ և արգելապատնեշներ պետք է օգտագործվեն եթե աշխատանքները իրականացվեն մանկական հաստատությունների մոտ: Արարգության սահմանափակում պետք է սահմանվի տրանսպորտային միջոցների երթևեկի համար: Շինարարական նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակումը, ինչպես նաև շինարարական տեխնիկայի կայանումը չպետք է փակի բնակիչների սեփականությունների և հանրային տարածքների մուտքերը: Իսկ եթե այն անխուսափելի է, ապա այլընտրանքային ժամանակավոր շրջանից մուտք պետք է ապահովվի:

### **Հանրային լուծումներ**

Հանրային լուծումների գործընթացը մեկնարկել է նախագծման վաղ փուլում՝ նախքան շինարարությունը, և շարունակվելու է ծրագրի իրականացման ընթացքում: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ խորհրդակցություններ կկազմակերպվեն, ինչը թույլ կտա բարձրացնել ծրագրի շահառուների տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը իրենց վրա ազդեցություն ունեցող հարցերում, ինչպես նաև դա թույլ կտա ավելի արդյունավետ արձագանքել ծրագրին առնչվող անհանգստություններին: Հանրային լուծումները պետք է կազմակերպվեն և իրականացվեն ՏԾԻԿ-ի կողմից, որին աջակցելու են նախագծող կազմակերպությունը, ինչպես նաև պետք է ապահովել անմիջական ազդեցության ենթարկվող անձանց ու համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը: Հանրային լուծումների ընթացքում ներկայացվելու են նախագծերի նախնական տարբերակները, Բողոքների լուծման մեխանիզմը, բնապահպանական ու սոցիալական (օրինակ՝ բռնություն կանանց նկատմամբ) այն հարցերը, որոնք կարող են ծագել ծրագրի իրականացման տարբեր փուլերում, ինչպես նաև ներկայացվելու են այդ ազդեցությունները մեղմացնող միջոցները: Լուծումները կազմակերպվելու են այն վայրերում, որոնք հասանելի կլինեն բոլոր շահառուների համար, օրինակ՝ համայնքային կենտրոններ, համայնքային դպրոցների կողմից տրամադրված տարածքներ: Ցանկացած շահառու այդ ընթացքում կարող է արտահայտել իր կարծիքը: Սակայն, անհրաժեշտության դեպքում, կդիտարկվեն առանձին խորհրդակցությունների տարբերակները շահառուների տարբեր խմբերի հետ (օրինակ՝ կանանց համար):

### **Բնակիչների դիմումների դիտարկում Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով**



ԿՆՃԲ ծրագրի (ներառկալ 2 ԼՖ-ները) իրականացման նպատակով ստեղծվել է Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼԽ), որը հնարավորություն է տալիս տեղում ընդունել, գնահատել և լուծել համայնքի բողոքները կամ կարծիքները: ՏԾԻԿ-ը ստեղծել է արդյունավետ աշխատող ԲԼԽ, ինչը թույլ է տալիս ծրագրի ներքո ազդեցության ենթարկվող անձանց ներկայացնել իրենց մտահոգությունները և լուծումներ ստանալ՝ համաձայն սահմանված կարգի: Նախագծին ու շինարարության գործընթացին առնչվող դիմումները/բողոքները անցնելու են ՏԾԻԿ-ի ԲԼԽ-ով: Պոտենցիալ դիմողները կստանան անհրաժեշտ տեղեկատվություն ԲԼԽ-ի գործունեության ու ՏԾԻԿ-ի կոնտակտային տվյալների մասին Ծրագրի իրականացման վաղ փուլերում, ինչպես նաև հանրային լուծումների ընթացքում:

Առաջարկվող ծրագրի համար բողոքների լուծման ընթացակարգը մի քանի քայլ է ներառում.

- (i) Նախ բողոքներ ունեցող անձիք դիմելու են համայնքապետին կամ Բողոքների համար պատասխանատու անձին (ԲՊԱ), ով նշանակվում է համայնքապետի կողմից: Համայնքապետը/ԲՊԱ պետք է համագործակցեն Կապալառուի և Վերահսկողի հետ պարզելու և դիտարկելու համար առաջացող խնդիրները: Դիմողների բոլոր բողոքները և տրված բոլոր պատասխանները պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվեն, արխիվացվեն ԲՊԱ-ի կամ Կապալառուի կողմից, և այնուհետև փոխանցվեն ՏԾԻԿ հետագա մոնիտորինգի համար: Բողոքներ ունեցող անձիք կարող են նաև անմիջապես դատարան դիմել իրենց խնդրի լուծումը ստանալու նպատակով:
- (ii) Եթե բողոքը չի լուծվում երկու շաբաթվա ընթացքում տեղական ինքնակառավարման մակարդակով կամ Կապալառուի կողմից դիտարկվելուց հետո, դիմողները կարող են ներկայացնել իրենց բողոքը ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ (մասնավորապես տեխնիկական կամ պայմանագրերին վերաբերվող հարցերի դեպքում): Բողոքը ստանալուց հետո ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ-ը կվերանայեն այն և որոշում կներկայացնեն: ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ-ը կարող է համապատասխան շահառուների ներգրավել բողոքի դիտարկման ընթացքում (Նախագծող, Վերահսկող, Կապալառու, տարբեր փորձագետներ, և այլն): Եթե բողոքը չի լուծվում ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ-ի կողմից, դիմողի պահանջով կարող է հրավիրվել Բողոքների լուծման հանձնաժողով:
- (iii) Եթե լուծում չի տրվում ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ-ի կամ ԲԼՀ մակարդակով երկու շաբաթվա ընթացքում դիտարկվելուց հետո, դիմողը կարող է դատարան դիմել՝ համաձայն ՀՀ օրենսդրության՝ գիտակցելով, որ ծրագրին առնչվող բոլոր հողօգտագործման, սոցիալական ու բնապահպանական հարցերի շուրջ հատուկ համաձայնությունները ՀՀ կառավարության և ՀԲ-ի միջև, և ԳՔ 4.12-ը որպես դրանց մաս, գերակայելու են ազգային օրենքի նկատմամբ:

ԲԼԽ կարող է հնարավորություն տալ բողոքներ ստանալ ԿՆԲ-յան վերաբերյալ, դրանց մասին գաղտնի հայտնելու ուղիների վերաբերյալ, ապահով և էթիկայի կանոններին համապատասխան փաստաթղթավորման ընթացակարգերի մասին,

ինչպես նաև հնարավորություն ստեղծել դիտարկել ԿՆԲ-յան դեպքերը, ինչը կարող է ներառել նաև գոյություն ունեցող ԿՆԲ-յան հետ կապված խնդիրներով ծառայություն մատուցողներին դիմելու հարցերում:

### **Կանանց նկատմամբ բռնությունը մեղմացնող միջոցներ**

ՏԾԻԿ-ը, հիմնվելով անկախ խորհրդատուի գնահատման վրա, պետք է պարզի և անդրադառնա գենդերային բացերին, եթե դրանք առկա են: Խորհրդատուն հավաքագրել է է և ՏԾԻԿ-ին տրամադրել տեղեկատվություն ԳՀԲ առնչվող նախնական ռիսկերի նույնականացման վերաբերյալ, համապատասխան ծառայություն և կացարաններ տրամադրողների վերաբերյալ, ինչպես նաև այն ուղիների, որով հնարավոր է հայտնել ԳՀԲ-յան բողոքների մասին: Անկախ խորհրդատուի առաջարկների հիման վրա՝ ՏԾԻԿ-ը կթարմացնի ԲԼՄ-ը և կարծանագրի ու կանդրադառնա ԳՀԲ - դեպքերին:

Գենդերային հիմքով բռնության և հատկապես սեռական շահագործման եւ չարաշահման հնարավոր ծրագրային ռիսկերը հասցեագրելու նպատակով՝ ծրագրի ընթացքում կկիրառվեն Բանկի «Գենդերային հիմքով բռնության հասցեագրումը քաղաքացիական շինարարություն ենթադրող ներդրումային ծրագրի ֆինանսավորման մեջ» գրքույկի առաջարկները: Ըստ Բանկի ԳՀԲ ռիսկերի գնահատման գործիքի, սույն ծրագրի 2րդ լրացուցիչ ֆինանսավորումը գնահատվում է որպես ‘ցածր ռիսկային ԳՀԲ առումով’: Ծրագիրը ներկայումս իրականացնում է միջոցառումներ, որոնք համապատասխանում են այս ռիսկի մակարդակին, ինչպես օրինակ, ծրագրի հարակից համայնքներում ԳՀԲ ծառայություններ մատուցողների քարտեզագրումը, ծրագրի ԲԼՄ-ում ԳՀԲ ընթացակարգերի ինտեգրումը, ԳՀԲ-զգայուն լուսմենրի իրականացումը ծրագրի շահառու համայնքներում, ինչպես նաև կապալառուի պարտականությունների խստացումը՝ ԳՀԲ ռիսկերը հասցեագրելու հարցում: Վերջինս իրականացվելու է ‘Վարքագծի պայմաններ’ փաստաթղթում որը սահմանում է բոլոր աշխատակիցների պարտականությունները աշխատավայրում՝ ԳՀԲ, հատկապես սեռական շահագործման և չարաշահման ու սեռական ոտնձգությունների հետ կապված: Ծրագրի ԲԼՄ-ն ընդլայնվելու է, որպեսզի ընդգրկի ԳՀԲ բողոքները, անանուն հաշվետվությունները եւ ապահով ու էթիկական փաստաթղթագրման ընթացակարգերը, ԳՀԲ դեպքերի ուղղորդումը եւ կարգավորումը գործող ծառայություններ մատուցողների միջոցով, որոնք այս պահին նույնականացվում են ծառայություն մատուցողների քարտեզագրման շրջանակում: ԲԼՄ օպերատորները համապատասխան կերպով վերապատրաստվելու են:

ՏԾԻԿ-ը իր անհամաձայնությունը կհայտնի շինարարական կազմակերպությունների կողմից տեղի ոչ պրոֆեսիոնալ ժամանակավոր աշխատուժի նկատմամբ սեռական և էթնիկ խտրականության ցուցաբերման դեպքերին:

### **Շահագործման փուլ**

Պարբերաբար պետք է իրականացվեն վերանորոգված ճանապարհների տեխնիկական սպասարկման աշխատանքներ: Որը կնշանակի դրենաժային համակարգի մաքրում, ճանապարհի մակերևույթի և կողնակների վրա ջրի

կուտակումներից խուսափելու համար; ճամփեզրի աղբի հավաքում և աղբատարում; ձյան մաքրման աշխատանքներ և անհրաժեշտության դեպքում ճանապարհների վերանորոգում: Վերանորոգման աշխատանքների ընթացքում առաջացած աղբը պետք է հավաքվի և տեղափոխվի աղբավայր: Աղբի թափումը ճանապարհի կողնակում պետք է խստիվ արգելվի: Ճանապարհային նշանները կանոնավոր կերպով պետք է ուսումասիրվեն և անհրաժեշտության դեպքում փոխարինվեն նորերով;

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ**

Ներկա ԲՍԿՇ փաստաթղթի հայերեն և անգլերեն տարբերակները տեղադրվել են ՏԾԻԿ-ի կայքէջում և կազմակերպվել է հանրային լսում, որի ընթացքում այս փաստաթղթերը քննարկվել են շահառուների հետ: ԲՍԿՇ փաստաթուղթը լրամշակվել է ստացված դիտողությունների/մեկնաբանությունների հիման վրա, կցվել է հանրային խորհրդակցության արձանագրությունը:

### **Տեղամասին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների վերաբերյալ քննարկումներ**

Տեղամասին բնորոշ բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների նախագծերի հայերեն և անգլերեն տարբերակները կտեղադրվեն ՏԿՏՏՆ-ի կայքէջում և որոշ քանակի հայերեն տպագրված օրինակներ կբաժանվեն տեղական կառավարման հաստատություններին ապահովելու համար այդ փաստաթղթերի հասանելիությունը Ծրագրի կողմից ազդեցության ենթարկված համայնքներում: ՏԾԻԿ-ը կխորհրդակցի տեղական կառավարման մարմինների հետ նպատակահարմար ու համապատասխան ձևաչափով և միջոցներով ազդեցության ենթարկված համայնքների ներգրավվածությունը ապահովելու համար ԲՍԿՊ-ների քննարկումներին: Կանանց, երիտասարդության և խոցելի խմբերի ներգրավումը հանրային քննարկումներին պարտադիր է: ԲՍԿՊ-ները կլրամշակվեն ստացված դիտողությունների/մեկնաբանությունների հիման վրա և կտեղադրվեն կայքէջում:

## **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ**

Առաջարկված առանձին ներդրումների բնապահպանական և սոցիալական ստուգումները կիրականացվեն ՏԾԻԿ-ի կողմից: Ծրագրով վերանորոգման ենթակա ցուցակում որևէ ճանապարհահատվածի ներառման դեպքում, ՏԾԻԿ-ը կուսումնասիրի տարածքը նախատեսվող աշխատանքների հետևանքով առաջացող բնապահպանական և սոցիալական ռիսկերի բացահայտման նպատակով: Այս փուլում կորոշվի նախատեսվող ներդրման կատեգորիան բնապահպանական տեսակետից և եթե այն դասվի Ա դասի բնապահպանական տեսակետից գործունեության, ապա այդ նախատեսվող ներդրումը կմերժվի:

ՏԿՏՏՆ և ՀԲ կողմից հաստատված նախատեսվող ներդրումների համար կմշակվեն մանրամասն նախագծեր և տեղամասին բնորոշ բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ: ՏԾԻԿ-ը համարված չէ բնապահպանության սոցիալական մասնագետներով, ուստի կօգտվի խորհրդատուների ծառայություններից ապահովվելու բնապահպանական և

սոցիալական անվտանգությունը ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) շրջանակներում: Սա ենթադրում է վերահսկողություն համահունչազգային բնապահպանական օրենսդրությանը, ՀԲ անվտանգության քաղաքականություններին, ներկա ԲՍԿՇ փաստաթղթին և տեղամասին բնորոշ ԲՍԿՊ-ներին:

ԲՍԿՊ-ները և ՎԳՊ, անհարաժեշտության դեպքում, կմշակվեն խորհրդատուների կողմից համակցվելով ճանապարհի վերանորոգման նախագծերի հետ: ԲՍԿՊ-ները կներառվեն մրցութային փաթեթների մեջ և կկցվեն շինարարական պայմանագրերին, դարձնելով դրանց իրականացումը պայմանագրային պարտադիր պայման շինարարական կազմակերպությունների համար: Շինարարական կազմակերպության կողմից ԲՍԿՊ պահանջների խախտման դեպքում, որը կպատճառի վնասներ շրջակա միջավայրին, ՏԾԻԿ-ը կմշակի պատճառած վնասների վերացման ժամանակացույց, և Կապալառուին պարտավոր կլինի այն իրականացնելու: Հետևաբար պայմանագիրը պետք է պարունակի համապատասխան դրույթներ հարկադրելու կապալառուներին վերացնելու շրջակա միջավայրին պատճառած վնասները:

ՏԾԻԿ-ը կվարձի շինարարական աշխատանքների լիցենզավորված տեխնիկական վերահսկիչ, և այդ կազմակերպության տեխնիկական առաջադրանքի մեջ կներառի շրջակա միջավայրի վերահսկողությունը: Տեխնիկական առաջադրանքը ենթակա կլինի վերանայման և հաստատման ՀԲ-ի կողմից: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող խորհրդատուին պարտավոր կլինի ամսական հաշվետվություն տալ շրջակա միջավայրի վերահսկողության վերաբերյալ ներառելով բոլոր այն շինարարական տեղամասերը, որտեղ շինաշխատանքներ են ընթանում: ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ների) շրջանակներում բնապահպանական և սոցիալական համապատասխանելիության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է ՏԿՏՏՆ-ի և ՏԾԻԿ-ի վրա: Այդ իսկ պատճառով ՏԾԻԿ-ը պարտավոր է ապահովելու աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի որակը, որը իրականացվելու է տեխնիկական վերահսկիչի կողմից: Տեխնիկական վերահսկիչի կողմից տրամադրված տեղեկությունը կստուգվի պատահական տեղային ստուգումների միջոցով:

ՏԾԻԿ-ը ԿՆՃԲ ծրագրի (ներառյալ 2 ԼՖ-ները) ընթացքի վերաբերյալ հաշվետվություն կներկայացնի ՏԿՏՏՆ և ՀԲ: Ծրագրի ընթացիկ հաշվետվության անբաժանելի մաս պետք է կազմի բնապահպանական և սոցիալական համապատասխանելիության վերաբերյալ տեղեկությունը: Այն հիմնված կլինի վերահսկող խորհրդատուի ամսական տեղեկատվությունների վրա որպես գործող շինհրապարակների ամսական բնապահպանական վերահսկողության հաշվետվությունների մաս:

ՏԾԻԿ-ի հաշվետվությունները կպարունակեն վերլուծական տեղեկություն բնապահպանական և սոցիալական համապատասխանելիության ամբողջական վիճակի վերաբերյալ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար, վեր կհանեն առաջ եկած խնդիրները և դրանց համապատասխան կիրառված մեղմացուցիչ միջոցառումները: Տեխնիկական վերահսկիչի կողմից լրացված ամսական

դաշտային բնապահպանական մոնիթորինգի ստուգաթերթիկները կկցվեն ՏԾԻԿ-ի ընթացիկ հաշվետվություններին:

*Հավելված 1. Ճանապարհների փոքրածավալ շինարարության կամ վերականգնման համար մշակված Բնապահպանական կառավարման պլանի ստուգաթերթիկ*

**ՄԱՍ 1: Ընդհանուր տեղեկություն ծրագրի և տեղանքի վերաբերյալ**

| <b>ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՅԻՆ &amp; ՎԱՐՉԱԿԱՆ</b>   |                           |                                 |  |           |
|---|---------------------------|---------------------------------|--|-----------|
| Երկիր   |                           |                                 |  |           |
| Ծրագրի անվանումը  |                           |                                 |  |           |
| Վերականգնվող ճանապարհը  |                           |                                 |  |           |
| Ծրագրի շրջանակը և գործունեությունը  |                           |                                 |  |           |
| Կառուցվածքային կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)   | ՀԲ (Ծրագրի խմբի ղեկավար)  | ՏԾԻԿ տնօրեն                     | Տեղական գործընկեր կամ շահառու (մարզային կամ համայնքային) |           |
| Իրականացման կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)  | ՀԲ Անվտանգության մասնագետ | ՏԾԻԿ-ի անվտանգության աշխատակազմ | Տեխնիկական վերահսկող                                     | Կապալառու |
| <b>ՏԵՂԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>   |                           |                                 |  |           |
| Տեղանքի անվանումը   |                           |                                 |  |           |
| Տեղանքի գտնվելու վայրի նկարագրությունը  |                           |                                 |  |           |
| Հողի սեփականատիրոջ անունը / անվանումը   |                           |                                 |  |           |
| Աշխարհագրական, ֆիզիկական, կենսաբանական, երկրաբանական, հիդրոգրաֆիական և սոցիալ-տնտեսական պայմանների նկարագրությունը  |                           |                                 |  |           |
| Նյութերի՝ մասնավորապես լցանյութերի, ջրի, քարերի, վերցման վայրը և հեռավորությունը  |                           |                                 |  |           |
| <b>ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ</b>   |                           |                                 |  |           |
| Ծրագրի գործողության համար կիրառվող ազգային, տեղական օրենսդրությունը և թույլտվությունները  |                           |                                 |  |           |
| <b>ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>  |                           |                                 |  |           |
| Ներկայացնել երբ/որտեղ են տեղի ունեցել հանրային խորհրդակցությունները   |                           |                                 |  |           |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>  |                           |                                 |  |           |
| <ul style="list-style-type: none"> <li>- Հանրային քննարկումների արձանագրություններ</li> <li>- Տեղանքի քարտեզ և լուսանկարներ</li> <li>- Աշխատանքների և շահագործման ընթացքում փլուզումների դիսկերի, հավանականության ակնկալվող ազդեցությունների վերաբերյալ փորձագետի եզրակացություն</li> </ul> |                           |                                 |  |           |

**ՄԱՍ 2. Անվտանգության պահանջների ստուգում եվ գործարկում**

| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ |   |  |                               |
|--|---|--|-------------------------------|
| Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը   | Գործունեություն / Խնդիր                                       | Կարգավիճակ   | Գործարկված պահանջները         |
|  | Ա. Ճանապարհների վերականգնում                                  | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Ա-ն ստորև |
|  | Բ. Փոքրածավալ երթևեկության ենթակառուցվածքի նոր շինարարություն | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Ա-ն ստորև |
|  | Գ. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ    | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Բ-ն ստորև |
|  | Դ. Պատմական շենքեր և շրջաններ                                 | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Գ-ն ստորև |
|  | Ե. Հողի օտարում <sup>2</sup>                                  | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Դ-ն ստորև |
|  | Զ. Վտանգավոր կամ թունավոր նյութեր <sup>3</sup>                | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Ե-ն ստորև |
|  | Է. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա     | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Զ-ն ստորև |
|  | Ը. Չպայթեցված զինամթերքի առկայության վտանգ                    | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Է-ն ստորև |
|  | Թ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն                   | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ | Եթե«Այո», տես Բաժին Ը-ն ստորև |
| Ճ. Սոցիալական ռիսկերի կառավարում                                       | <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ      | Եթե«Այո», տես Բաժին Թ-ն ստորև                            |                               |

<sup>2</sup>Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնական տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ունեցող) մարդկանց վրա:

<sup>3</sup> Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն ասբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն:

**ՄԱՍ 3. Մեղմացնող միջոցառումներ**

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ                                   | ՑՈՒՑԱՆԻՇ   | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ   |
|---|--|---|
| 0. Ընդհանուր պայմաններ                          | Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն | <p>(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ</p> <p>(բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը)</p> <p>(գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները</p> <p>(դ) Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊԱ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաճկոնակներ և կոշիկներ)</p> <p>(զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս</p> |
| Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ | Օդի որակ   | <p>(ա) Փորման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն փոշին նստեցնող միջոցառումներ, օրինակ՝ հողի վրա ջուր ցողալը և խոնավեցնելը</p> <p>(բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով</p> <p>(գ) Պնևմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց</p> <p>(դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօթյա այրումը չի թույլատրվում</p> <p>(զ) Բոլոր օգտագործվող մեքենաները պետք է համապատասխանեն արտանետումներին առնչվող տեղական օրենսդրությանը, և պետք է պատշաճ կերպով շահագործվեն և սպասարկվեն, հրապարակներում շինարարական տեխնիկան չպետք է պարապորդի մատնվի</p>  |
|   | Աղմուկ   | <p>(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնագրում նշված ժամերով(բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդիկոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու</p>  |



|  |                             |  |
|--|-----------------------------|--|
|  | Ջրի որակ                    | (ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրիուսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով  |
|  | Թափոնների կառավարում        | (ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից<br>(բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով,<br>(գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից<br>(դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը<br>(ե) Հնարավորության դեպքում կապալառու կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)   |
| Բ. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ | Ջրի որակ                    | (ա) Ստորերկրյա ջրերի չկառավարվող արդյունահանումը, օգտագործված ջրերի, ցեմենտային ջրերի կամ ցանկացած այլ կեղտաջրերի չկարգավորված հեռացումը դեպի հող կամ մոտակա ջրահուսքեր ու գետեր պետք է բացառվի: Կապալառու պետք է ձեռքբերի ջրի արդյունահանման և դեպի հանրային կոյուղի կարգավորված ջրահեռացման համար բոլոր անհրաժեշտ հավաստագրերը և թույլտվությունները<br>(բ) Պետք է տեղադրվի և շահագործվի անձրևաջրերի հեռացման պատշաճ համակարգ՝ թույլ չտալով նստվածքի կուտակումը, աղտոտումը, խցանումը կամ այլ բնական ջրահուսքերի, գետերի, լճակների և լճերի վրա շինարարական աշխատանքների արդյունքում այլ բացասական ազդեցությունը<br>(գ) Վառելիքի, քսայուղերի կամ այլ թունավոր և վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը կանխելու և դրա առաջացման դեպքում ճիշտ գործելու նպատակով, պետք է մշակվեն հատուկ կանոնակարգեր<br>(դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում |
| Գ. Պատմական շինություններ                                  | Մշակութային ժառանգություն   | (ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ցանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային օրենսդրության պահանջների համաձայն<br>(բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով  |
| Դ. Հողի օտարում  | Հողի օտարման պլան / շրջանակ | (ա) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սակայն կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի:   |

|   |  |   |
|---|--|---|
|   |  | (բ) Հաստատված Հողի օտարման պլանը / շրջանակը (եթե այն պահանջվում է ծրագրի համար) պետք է իրականացվի   |
| Ե. Թունավոր նյութեր   | Ասբեստի կառավարում   | (ա) Եթե ասբեստը տեղակայված է ծրագրի տարածքում, այն պետք է հստակ մակնշված լինի որպես վտանգավոր նյութ<br>(բ) Հնարավորության դեպքում ասբեստը պետք է ծածկված լինի՝ դրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով<br>(գ) Նախքան հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) ասբեստը պետք է մշակվի խոնավ նյութով՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով<br>(դ) Ասբեստը պետք է մշակվի և հեռացվի փորձառու և մասնագիտացած անձնակազմի կողմից<br>(ե) Եթե ասբեստ պարունակող նյութերը չեն կարող պահվել ժամանակավորապես, թափոնները պետք է պահվեն կոնտեյներների մեջ՝ համապատասխան մակնշումով: Անվտանգության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ հրապարակից դրանց չարտոնագրված հեռացումը բացառելու նպատակով<br>(զ) Հեռացված ասբեստի կրկնակի օգտագործումը չի թույլատրվում   |
|   | Թունավոր / վտանգավոր թափոնների կառավարում  | (ա) Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները<br>(բ) Վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատոսքը բացառելու նպատակով<br>(գ) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ հավաստագրված փոխադրողների կողմից և տեղադրվեն հավաստագրված վայրում<br>(դ) Թունավոր բաղադրիչներ պարունակող ներկերի կամ լուծիչների կիրառումը չի թույլատրվում   |
| Զ. Ազդեցություններ անտառների, գերխոնավ և/կամ պահպանվող տարածքների վրա | Էկոհամակարգի պահպանություն   | (ա) Բոլոր ընդունված բնադրավայրերը, գերխոնավ և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են հրապարակի անմիջական մոտակայքում չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, աշխատակազմին պետք է խիստ արգելվի իրականացնել որս, խետահավաք, ջրածածկում կամ այլ վնասակար գործողություններ<br>(բ) Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի<br>(գ) Հարակից գերխոնավ տարածքները և ջրահոսքերը պետք է պահպանվեն արտահոսքից՝ էրոզիան և նստվածքի առաջացումը կարգավորող համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք ներառում են սակայն սահմանափակված չէն հարդի պարկերի և նստվածքների հեռացման ցանցերի տեղադրմամբ<br>(դ) Չհավաստագրված հանքավայրերի, քարհանքերի, աղբավայրերի օգտագործումը չի թույլատրվում՝ հատկապես պահպանվող տարածքներում |
| Է. Չպայթեցված գինամթերքի առկայության վտանգ                            | Մարդու առողջությանը և անվտանգությանը հասցվող վտանգ                                   | (ա) Ցանկանաձ փորման աշխատանք սկսելուց առաջ կապալառում պետք է հավաստիանա, որ շինարարական տարածքը ստուգված է համապատասխան մարմինների կողմից և այնտեղից հեռացված է չպայթեցված ցինամթերքը   |
| Ը. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն                             | Շին. աշխատանքների իրականացման արդյունքում հանրային երթևեկությանը և հետիոտնին հասցված | (ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառում պետք է ապահովվի շինարարական հրապարակի անվտանգությունը և երթևեկության կարգավորումը: Այս միջոցառումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում <ul style="list-style-type: none"> <li>ցուցապաստառների, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթևեկության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով</li> </ul>   |

|   |   |   |
|---|---|---|
|   | <p>ուղղակի կամ անուղղակի վնաս</p>       | <ul style="list-style-type: none"> <li>• Երթևեկության կառավարման համակարգի առկայությամբ և անձնակազմի ուսուցմամբ, հատկապես շինարարական տեղանք մուտք գործելու և հրապարակի մերձակայքում ցանրաբեռնված երթևեկության դեպքում</li> <li>• Աշխատանքային ժամերի փոփոխմամբ՝ համապատասխանեցնելով դրանք տեղական երթևեկության առանձնահատկություններին, օրինակ՝ պիկային ժամերին կամ անասունների տեղաշարժի ժամերին փոխադրումների կատարումից խուսափելով</li> <li>• Անհրաժեշտության դեպքում՝ պատրաստված անձնակազմի կողմից երթևեկության կառավարման իրականացմամբ՝ հրապարակում մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով</li> <li>• Շինարարության ընթացքում գրասենյակային կառույցների, խանութների և բնաչիկների անվտանգ ու շարունակական հասանելիության ապահովմամբ</li> </ul>   |
| <p>Թ. Սոցիալական ռիսկերի կառավարում</p> | <p>Հանրության հետ կապերի կառավարում</p> | <p>(a) Կապալառուի թմի հետ կապող օղակ հանդիսացող անձ նշանակել, ով պատասխանատու կլինի տեղի բնակչությունից բողոք/դիմումների ստացման և նրանց հետ հաղորդակցման համար:</p> <p>(b) Խորհրդակցել տեղի համայնքների հետ՝ պարզելու և ապա կառավարելու համար այն պոտենցիալ կոնֆլիկտները, որոնք կարող են առաջանալ արտաքին աշխատուժի և տեղական բնակչության միջև:</p> <p>(c) Բարձրացնել համայնքի տեղեկացվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ, որոնք կապված են արտաքին աշխատուժի ներկայությամբ, ինչպես նաև այդ քննարկումներին ներգրավել տեղական համայնքները:</p> <p>(d) Բնակչությանը տեղեկացնել շինարարության և աշխատանքների ժամանակացույցերի մասին, ծառայությունների ընդհատման, շրջանցող երթևեկության ուղիների և ժամանակավոր ավտոբուսային երթուղիների, ինչպես նաև պայթեցման և քանդման աշխատանքների մասին, համապատասխան դեպքերում:</p> <p>(e) Սահմանափակել շինարարական աշխատանքները գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում ապահովել, որ գիշերային ժամերին կատարվող աշխատանքի մասին համայնքը տեղեկացված է, որպեսզի համայնքի բնակիչները հնարավորություն ունենան համապատասխան միջոցներ ձեռնարկել:</p> <p>(f) Ծառայությունների մատուցման (ներառյալ՝ ջուր, հոսանք, հեռախոսակապ, ավտոբուսային երթուղիներ) ընդհատումներից առնվազն հինգ օր առաջ այդ մասին տեղեկացնել համայնքին՝ դրա մասին տեղեկատվությունը հրապարակելով շինհրապարակում, կանգառներում և ազդեցության ենթակա տների/բիզնեսների մոտ:</p> <p>(g) Անդրադառնալ Գործատուի կողմից հաստատված ԲԼԽ-ի միջոցով բարձրացված մտահոգություններին սահմանված ժամանակատվածում և Կապալառուի իրավասությունների շրջանակում:</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ճամբարները պետք է հնարավորինս հեռու գտնվեն տեղի համայնքներից:</p> <p>(i) Ծամբարների տեղակայությունը և գործունեությունը պետք է համաձայնեցնել հարակից համայնքների հետ:</p> <p>(j) Ապահովել, որ բողոքները պատշաճ կերպով ստացվեն, արձանագրվեն և դիտարկվեն կապալառուների ու ՏԾԻԿ-ի կողմից:</p> |
|   | <p>Աշխատուժի կառավարում</p>             | <p>(a) Հնարավորինս ներգրավել առանձ կամ միջին որակավորում ունեցող աշխատողների տեղի համայնքներից: Հնարավորության դեպքում պետք է նրանց հմտությունների բարձրացման դասընթացներ կազմակերպվեն՝ խթանելու համար տեղի բնակչության մասնակցությունը:</p> <p>(b) Շինհրապարակներում ապահովել համապատասխան սանհանգույցներ (զուգարաններ, լվացարաններ)՝ տաք և սառը ջրով, օճառով և ձեռքերը չորացնելու սարքերով: Յուրաքանչյուր ճամբարի համար պետք է լինեն ժամանակավոր պարզարաններ, ինչը թույլ չի տա աղտոտել հարակից ջրազծերը:</p> <p>(a) Բարձրացնել աշխատողների տեղեկացվածությունը տեղի բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների</p>   |

|  |                                  |  |
|--|----------------------------------|--|
|  |                                  | կառավարման հարցում, հաստատել վարքագծի կանոններ, միջազգային պրակտիկայի համաձայն, և խստորեն պարտադրել դրանք, ընդհուպ մինչև աշխատողների ազատում կամ համապատասխան տուգանքների կիրառում:  |
|  | Կանանց նկատմամբ բռնություն (ԿՆԲ) | (a) Հանրային լսումների ժամանակ տեղեկատվություն տրամադրել ԿՆԲ դիսկերի վերաբերյալ:<br>(b) Ապահովել, որ ԿՆԲ առնչվող բողոքները ստացվեն, արձանագրվեն և լուծվեն ծրագրի ԲԼԽ-ի միջոցով գաղտնի կերպով: <ul style="list-style-type: none"> <li>Ուղղորդել բռնության ենթարկված կանանց համապատասխան ծառայություններ մատուցողների ու ապահովել, որ նրանց անմիջապես օգնություն է առաջարկվում</li> </ul>        |
|  | Վարքագծի նորմեր (ՎՆ)             | 1. Կապալառուների ձեռքբերման պահանջների մեջ ավելացնել հետևյալը՝ (i) ընդունել ՎՆ, որոնք վարքագծին վերաբերվող նորմեր ու կանոնակարգեր են սահմանում և, որոնք անդրադառնում են ԿՆԲ հարցերին, (ii) համաձայնեցնել դրանք և ստորագրել տալ կապալառուի անձնակազմի կողմից, ովքեր ֆիզիկապես գտնվելու են շինհրապարակներում, և (iii) վերապատրաստել անձնակազմին ՎՆ-ի ներքո իրենց պարտավորությունների վերաբերյալ: |

**ՄԱՍ 4: ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

| Ո՞ր<br>(ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի) | Որտե՞ղ<br>(է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը) | Ինչպե՞ս<br>(է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը) | Ե՞րբ<br>(սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ) | Ինչո՞ւ<br>(է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը) | Գինը<br>(եթե ներառված չէ ծրագրի բյուջեում) | Ո՞վ<br>(է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար) |
|---|---|--|---|---|--|---|
| <b>ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>                 |   |  |   |   |  |   |
| 1.                                      |   |  |   |   |  |   |
| 2.                                      |   |  |   |   |  |   |
| 3.                                      |   |  |   |   |  |   |
| ...                                     |   |  |   |   |  |   |
| x.                                      |   |  |   |   |  |   |
| <b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>                 |   |  |   |   |  |   |
| 1.                                      |   |  |   |   |  |   |
| ....                                    |   |  |   |   |  |   |
| y.                                      |   |  |   |   |  |   |

**Հավելված II: Ամսական դաշտային բնապահպանական վերահսկողության ստուգաթերթիկ**

|   |        |         |    |     |                 |
|---|--------|---------|----|-----|-----------------|
| Տեղակայման վայրը  |        |         |    |     |                 |
| Կապալառուի անվանումը  |        |         |    |     |                 |
| Վերահսկիչի անվանումը  |        |         |    |     |                 |
| Այցելության ամսաթիվը  |        |         |    |     |                 |
| Շին աշխատանքների վիճակը   | Վիճակը |         |    |     | Մեկնաբանություն |
|   | Այո    | Մասնակի | Ոչ | Չ/Կ |                 |
| Հանքանյութի արդյունահանման թույլտվություն   |        |         |    |     |                 |
| Բետոնի/Ասֆալտի գործարանի շահագործման թույլտվություն   |        |         |    |     |                 |
| Շինարարական աղբի տեղադրման համաձայնություն  |        |         |    |     |                 |
| Շինհրապարակից կենցաղային աղբի աղբահանության պայմանագիր  |        |         |    |     |                 |
| Շինհրապարակի պարսպապատում/արգելապատում և զգուշացնող նշանների տեղադրում  |        |         |    |     |                 |
| Աշխատանքները չեն խոչընդոտում հետիոտնի տեղաշարժին և երթևեկությանը, կամ այլնտրանքային մուտք է տրամադրված  |        |         |    |     |                 |
| Աշխատանքային ժամերը պահպանվում են   |        |         |    |     |                 |
| Շինարարական մեքենաների և մեխանիզմների գտնվում են տեխնիկապես նորմալ վիճակում (ավելորդ արտանետումներ և աղմուկ չկա, վառելիքի, քսայուղերի և այլնի արտահոսք չկա)   |        |         |    |     |                 |
| Շինարարական նյութերը և թափոնները տեղափոխվում են ծածկով մեքենաներով  |        |         |    |     |                 |
| Շինհրապարակում ջուր է ցողվում փոշու բարձր մակարդակ առաջացնող աշխատանքների դեպքում   |        |         |    |     |                 |
| Շինարարական ճամբարի կամ աշխատանքային բազայի տարածքը ցանկապատված է, աղբի ժամանակավոր կուտակման, մեքենաների/սարքավորումների սպասարկման տարածքները հստակեցված են |        |         |    |     |                 |

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
| Շինարարական ճամբարը մատակարարվում է ջրով և սանիտարական աշխատանքներ իրականացվում են   |  |  |  |  |  |
| Շինարարական ճամբարը կամ աշխատանքային բազան համալրված է առաջին օգնության միջոցներով և կրակմարիչներով  |  |  |  |  |  |
| Աշխատողները կրում են արտահագուստ և անձնական պաշտպանության պարագաներ, համապատասխան տեղնուղղիական պահանջներին (ծեռնոցներ, սաղավարտ, շնչադիմակներ, ակնոցներ և այլն)   |  |  |  |  |  |
| Շին. տեխնիկայի և տրանսպորտային միջոցների սպասարկումն ու վառելիքի լիցքավորումը իրականացվում է անջրանցիկ մակերևույթի վրա, որը ապահովված է կլանող նյութերով վթարային արտահոսքերի դեպքում օգտագործելու համար |  |  |  |  |  |
| Շին. տեխնիկայի և տրանսպորտային միջոցները կլվացվեն բնական ջրային մարմիններից հեռու, կանխելու համար կեղտաջրերի անմիջական մուտքը ջրային մարմիններ   |  |  |  |  |  |
| Շինարարական աղբը տեղադրվում է միմիայն դրա համար հատկացված տեղում   |  |  |  |  |  |
| ԲՆական շինարարական նյութերի արդյունահանումը կատարվում է լիցենզիայում նշված պայմաններով   |  |  |  |  |  |
| Ավելցուկային գրունտի և բուսահողի պահում առանձին և օգտագործում հետլիցքի/ տեղամասի վերականգնման համար  |  |  |  |  |  |
| Աշխատանքների դադարեցում պատահական գտածոների դեպքում և համագործակցություն Մշակույթի նախարարության հետ   |  |  |  |  |  |
| Շին. Աշխատանքների ավարտից հետո , շինհրապարակը, շին. ճամբարը/ բազան մաքրվել է բոլոր շինարարությունից թողնված պարագաներից, և հարմոնիայի մեջ է շրջակա լանդշաֆտի հետ   |  |  |  |  |  |
| Կապալառուի և ՏԾԻԿ-ի կոնտակտային տվյալները ներկայացված են աշխատանքային ճամբարներում և հիմնական  |  |  |  |  |  |

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
| <p>շինհրապարակներում գտնվող<br/>ցուցատախտակների վրա</p>  |  |  |  |  |  |
| <p>Կապալառուն գրանցամատյան է<br/>պահում՝ արձանագրելու համար<br/>ազդեցության ենթակա<br/>համայնքի/անձանց կողմից<br/>ստացված բողոքները/հարցերը:</p> |  |  |  |  |  |



**Հավելված III. ԿՆՃԲԾ երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման համար ԲՍԿՇ և ՎՔՑ վերաբերյալ հանրային լսման արձանագրություններ**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ  
ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
2-ՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

**Ամսաթիվ՝** Փետրվարի 22, 2019

**Վայրը՝** Տրանսպորտի ծրագրերի իրականացման կազմակերպություն, Տիգրան Մեծի փող. 4, Երեւան

Հանդիպումը հրավիրվել էր ժամը 12: 00-ին:

Հանդիպմանը ներկա էին 17 մասնակիցներ (13 տղամարդ եւ 4 կին), այդ թվում, Տրանսպորտի ծրագրերի իրականացման կազմակերպություն ներկայացուցիչները, Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, Բնապահպանության նախարարության, Տարածքային զարգացման և կառավարման նախարարության ու մարզպետարանների ներկայացուցիչները:

Հանդիպումը բացեց Կենսական նշանակության ճանապարհների ցանցի բարելավման ծրագրի (ԿՆՃԲԾ) ղեկավար Լյուդմիլա Աղաբեկյանը եւ ողջունեց մասնակիցներին: Նա մասնակիցներին տեղեկացրեց, որ Հայաստանի կառավարությունը դիմել է Համաշխարհային բանկին՝ Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման (ԿՆՃԲԾ ԼՖ2) իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ 15 միլիոն ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալու նպատակով: Այն կուղղվի Հայաստանի տարբեր մարզերում տեղական ճանապարհների վերանորոգմանը 2020-2021 թթ. ընթացքում:

Նա անդրադարձավ ԿՆՃԲ ԼՖ2-ի ակնկալվող արդյունքներին, այդ թվում զբաղվածության ապահովման միջոցով գյուղական համայնքների անմիջական տնտեսական խթանմանը, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող բարելավված ենթակառուցվածքի երկարաժամկետ արդյունավետությանը: Բացի տնտեսական օգուտներից (տարածաշրջանային զբաղվածություն, շուկաների հասանելիություն գյուղատնտեսական արտանյութների համար և այլն), գյուղական բնակչությունը զգալի առավելություններ կունենա կրթական, սոցիալական և բժշկական ծառայությունների ավելի մատչելի դառնալու արդյունքում:

Նա ներկայացրեց հանրային խորհրդատվության նպատակը եւ համառոտ նկարագրեց ԿՆՃԲ ծրագրի իրականացման գործընթացը, ինչպես նաև 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման պատրաստման համար իրականացվող աշխատանքները: Տիկին Աղաբեկյանը ներկայացրեց ճանապարհային հատվածները եւ արդեն իրականացված աշխատանքները, ինչպես օրինակ առաջին տարվա ճանապարհների համար նախապատրաստված նախագծերը ու առաջին տարվա ճանապարհահատվածների համար նախատեսված աշխատանքները: Այնուհետև նա

անդրադաձավ շրջակա միջավայրի եւ սոցիալական վերլուծությունների կարեւորութանը, որոնք իրականացվել են ծրագրի նախապատրաստական փուլում:

Տիկին Աղաբեկյանը նշեց, որ քննարկվող փաստաթղթերը տեղադրվել են ՏԾԻԿ-ի եւ ՏԿՏՏ նախարարության ինտերնետային կայք էջերում:

Բնապահպանական և սոցիալական կառավարման (ԲՍՔՓ) և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթերի (ՎՔՇՓ) տպագիր տարբերակները, ինչպես նաև ծրագրի վերաբերյալ հիմնական տվյալների և այս երկու շրջանակների մեկ էջանոց ամփոփագիրը, տրամադրվել են մասնակիցներին: Բացի այդ, ամփոփագիրը նաև սահմանում է ԲՍՇԲ-ում ընդգրկված գենդերային բռնության վերաբերյալ նոր կանոնակարգերը:

ՏԿՏՏ նախարարությունը կրում է ԿՆՃԲ Ծրագրի իրականացման հիմնական պատասխանատվությունը և պատվիրակել է իրականացման գործառույթները ՏԾԻԿ ՊՈԱԿ-ին:

Տիկին Շուշան Քուրքչիյանը, Տրանսպորտի ԾԻԿ-ի սոցիալական եւ բնապահպանական երաշխիքների մասնագետը, ներկայացրեց ԿՆՃԲ ծրագրի երկրորդ ֆինանսավորման համար մշակված Բնապահպանական և սոցիալական կառավարման և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթերը:

Թարմացված ՎՔՇ փաստաթուղթի շրջանակներում ներկայացվեցին վերջինիս նպատակները և փաստաթղթով նախատեսված մոտեցումները: Ընդգծվեց, որ ծրագիրը չի նախատեսում նոր ճանապարհների կառուցում, և վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհների ծրագծով:

Մասնակիցներին տրամադրվել է տեղեկատվություն Համաշխարհային բանկի կողմից «Ոչ կամավոր վերաբնակեցման» գործառնական քաղաքականության և Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության վերաբերյալ, վերջիններիս բացերի բացահայտման եւ այդ բացերի հասցեագրելու առաջարկված մոտեցումների վերաբերյալ: Ներկայացվել են նաև իրավասությունների և փոխհատուցման մեխանիզմները, որոնք կկիրառվեն ծրագրի շրջանակներում, ինչպես նաև հողերի օտրման/վերաբնակեցման գործընթացի մշակման, վերանայման, հաստատման և իրականացման մեջ ներգրավված հիմնական հաստատությունները: Անդրադարձ է կատարվել նաև Վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) մշակման եւ իրականացման քայլերին, որին հետևել է մոնիտորինգի մանրամասն ներկայացումը: Մասնակիցներին մանրամասն ներկայացվել է Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ), նշվել է, որ բացի սովորական բողոքներից և դիմումներից այն ծառայելու է որպես Գենդերային հիմքով կատարված բռնություններին (ԳՅԲ) վերաբերվող բողոքների ուղղորդման միջոց՝ համաձայն Համաշխարհային բանկի կողմից ներմուծված նոր կանոնակարգերի:

-

ԲՍԿՇ փաստաթուղթի ներկայացումը վերաբերվում էր ԲՍԿՇ-ի մշակման նպատակներին, փաստաթղթում նշված խնդիրներին և դրանց հասցեագրմանը: Տեղեկատվություն է տրամադրվել նաև Համաշխարհային բանկի համապատասխան Գործառնական քաղաքականության և այն գործարկելու չափանիշների վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և ընթացիկ նախագծում ներգրավված հաստատությունների մասին: Անդրադարձ կատարվեց տեղական ճանապարհների վերանորոգման հետ կապված շրջակա միջավայրի պոտենցիալ ազդեցություններին, ինչպես նաև հիմնական մեղմացող միջոցառումներին, որոնք կարող էին օգտագործվել ազդեցությունների կանխարգելման կամ նվազեցման նպատակով: Մասնակիցները տեղեկացվեցին նաև բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլանների (ԲՍԿՊ) բովանդակության եւ այդտեղ նշված գործառույթների վերաբերյալ, որոնք կպատրաստվեն յուրաքանչյուր ճանապարհային հատվածի համար, ինչպես նաև վերահսկման բնապահպանական մշտադիտարկման ստուգաթերթերի վերաբերյալ: Վերջինս կօգտագործվի ԲՍԿՊ-ի իրականացման և ՏԾԻԿ-ի ու Տեխստրոլի կողմից կապալառուի գործունեության մոնիտորինգի համար:

Տիկին Քուրքչիյանը ընդգծեց, որ Համաշխարհային բանկի Գործառնական քաղաքականության համաձայն, առաջարկված ծրագիրը դասակարգվել է որպես «B» կատեգորիա, ինչը նշանակում է, որ Ծրագրի շրջանակներում վերաբնակեցման ազդեցություն չի նախատեսվում, սակայն մշակված ՎՔՇՓ-ն թույլ է տալիս ՏԾԻԿ-ին և ՏԿՏՏ նախարարությանը անհրաժեշտության դեպքում հասցեագրել վերաբնակեցման/ օտարաման հնարավոր խնդիրները:

Մասնակիցները հրավիրվեցին հարց եւ պատասխան ֆորմատով քննարկամյալ: Հանրային լսման ընթացքում բարձրացված հիմնական հարցերն ու տրամադրված պատասխանները համառոտ ամփոփված են ստորև:

### **Հարցուպատասխան**

**1. Հարց** (Բնապահպանության նախարարության ներկայացուցիչ)- Քանի՞ երթևեկելի գոտի ունեն ճանապարհները:

**Պատասխան**- Երկկողմանի ճանապարհներ են, հիմնականում 6 մ լայնություն ունեն:

**2. Հարց** (Արարատի մարզի ներկայացուցիչ)- Դուք ասացիք, որ որոշ ճանապարհների նախագծերը պատրաստ են: Լավ կլինի, եթե ճանապարհների նախագծերը դիտարկվեն նաև մարզպետարաններում: Մասնավորապես, Նորաշեն-Դվին ճանապարհահատվածում խորհրդային ժամանակներում աշխատանքներ են կատարել, հենապատեր են կառուցվել, իջվածք է առաջացել և ձյան, անձրևների պատճառով անհնար է դառնում մեքենաների երթևեկը:

**Պատասխան**- Ճանապարհի եզրով չթույլատրված կերպով անցել է գազատարը, և այդ գազատարի տակ ոչ մի մեխանիզմ չի կարող աշխատել: Ինչ վերաբերում է հենապատերին, ապա դրանց հետ կապված՝ մանրամասն նախագիծը ինժեներների մոտ կա, կարող եք նայել և տեսնել, թե ինչ լուծումներ են տրվել:

**3.Հարց** (Արարատի մարզի ներկայացուցիչ)- Ճանապարհի վրա պետք է ապահովվեն թեքությունները, որպեսզի ջուրը չմնա վրան: Արևշատ-Աբովյան արդեն վերանորոգված ճանապարհահատվածի մոտ բնակվող բնակիչներից մեկը բողոքել էր մարզպետին, որ հարևանի քամաջուրը, տանիքի ջուրը լցվում են իր տունը:

**Պատասխան-** Հարցին ծանոթ ենք, խնդիրը կարգավորվել է, ինժեները կարող է մանրամասնությամբ ներկայացնել: Նախագծման փուլում ջրահեռացման համակարգերին շատ կարևոր և կենտրոնական դերակատարություն է տրվում, որովհետև մեր կատարած ներդրման որակը և երկարակետությունը պայմանավորված է նաև դրանով: Բոլորս դա հստակ գիտակցում ենք: Ներդրումը կատարելիս նախագծողը բազմաթիվ հարցեր լուծում է, բացի այդ, շինարարներն էլ գյուղում աշխատանքներ կատարելիս, գյուղացիների ցանկացած խնդրի փորձում է լուծում տալ, անկախ նրանից, այդ խնդիրն առնչվում է ճանապարհին, թե ոչ: Մոտեցումը միշտ այդպիսին է եղել: Պայմանավորվենք այսպես. համայնքներում անցկացվելիք հանրային լուծումներին, որտեղ ներկա են լինելու Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպության և նախագծող ընկերության թիմերը, կիրավիրենք նաև մարզպետարանների ներկայացուցիչներին: Եթե հարմար գտնեք, կուղարկեք ձեր մասնագետներին:

**4.Հարց**-(Արարատի մարզի ներկայացուցիչ)-Հովտաշեն համայնքում վերանորոգված ճանապարհի կողնակները խճապատ են: Ավելի նպատակահարմար չէ՞ր լինի, որպեսզի կողնակներն ասֆալտապատ լինեին: Քանի որ գյուղական համայնքներում գրունտը կավային է, մեքենաները հաճախ դաշտերում խրվում են կավի մեջ, դուրս գալիս կողնակների վրա, և դժվարություններ են ստեղծվում:

**Պատասխան-**Կողնակներին առաջադրվող բոլոր պահանջները, որոնք սահմանված են նորմատիվներով, պահպանվում են: Շինարարության ընթացքում աշխատանքներին և՛ տեխնոկողը, և՛ ինժեները աջալրջորեն հետևում են: Մինչև գերատեսչական հանձնաժողովը չդիտարկի ճանապարհը, չարձանագրի, որ որակը համապատասխանում է չափանիշներին, ճանապարհը չի ընդունվի: Իսկ ինչ վերաբերում է կողնակների ասֆալտապատմանը, ապա դա բավականին թանկ արժե: Աշխատանքներն անում ենք մեր ունեցած հնարավորությունների շրջանակներում:

**5.Հարց** (Արագածոտնի ներկայացուցիչ)- Վերանորոգումից հետո ճանապարհը քանի՞ տարի է երաշխիքային սպասարկման փուլում գտնվում:

**Պատասխան-** Մեր ծրագրով շինարարի կողմից երաշխիքային սպասարկման ժամկետը մեկ տարի է: Սակայն որքան էլ շատ ներդրում կատարվի, որքան էլ շատ բարեկարգ ճանապարհ ունենանք, եթե այն չպահպանվի, մի քանի տարի անց ճանապարհի վրա կատարված ներդրումը կփոշիանա: Այնպես որ՝ ճանապարհի պահպանման հարցին պետք է շատ մեծ ուշադրություն դարձվի:

**Առաջարկ** (Արագածոտնի ներկայացուցիչ)- Մարզերում ճանապարհաշինական ծրագրեր իրականացնելիս, նախագծեր կազմելիս նպատակահարմար է համագործակցել տվյալ ճանապարհի պահպանությունն իրականացնող կազմակերպության հետ, քանի որ վերջիններս շատ մանրամասնորեն տեղյակ են այդ

ճանապարհի հետ կապված բոլոր խնդիրներին, տարածքի բնակլիմայական պայմաններին և այլն:

**6. Հարց-**(Գեղարքունիքի ներկայացուցիչ)- Մարզային նշանակության ճանապարհները վերանորոգվում են, համայնքի ղեկավարները ստորագրում, ընդունում են ճանապարհը, մեկ տարի անց դրանք հանձնվում են մարզպետարանների շահագործման: Եվ մինչև վերակառուցումը և վերակառուցման ընթացքում որևէ լիազորություն չունեցող մարզպետարանը շահագործման է վերցնում ճանապարհը՝ իր խնդիրներով հանդերձ: Շատ դեպքերում համայնքների ղեկավարները մասնագետներ չեն և չեն կարող խորությամբ հասկանալ նախագծերից, նույնը վերաբերում է համայնքների բնակիչներին: Մինչև վերջնական նախագիծը ընդունելը մարզպետարանը նույնպես պետք է գործուն մասնակցություն ունենա այս գործընթացում:

**Պատասխան-** Խնդիրը օրենսդրության տիրույթում է: Որքան էլ մենք բարի կամք դրսևորենք, մարզպետարաններին տեղեկացնենք, ներգրավենք մեր աշխատանքներին, միևնույն է, դա կլինի ընդամենը մեր սուբյեկտիվ ցանկությունը: Առավել նպատակահարմար կլինի, որպեսզի հարցը հիմնավոր լուծում ստանա և բերվի օրենսդրական դաշտ:

**7. Հարց-**(Գեղարքունիքի ներկայացուցիչ)- Աղբրածոր հատվածում ճանապարհի երթևեկելի հատվածը և կոպճային ծածկը նույն հարթության վրա են: Հնարավո՞ր է կոպճային ծածկը բարձրացնել մեկ մետրով:

**Պատասխան** – Ձեր նշած տարբերակը շատ ծախսատար է: Եղանակային պայմանների բարելավումից հետո միասին կգնանք, կդիտենք ճանապարհը, ֆիքսենք ամենավտանգավոր հատվածները, և ինչ հնարավոր է, կանենք:

**8. Առաջարկ-** (Լոռու մարզի ներկայացուցիչ)- Եղեգնուտի ճանապարհին հենապատի խնդիր կա, որը քայքայվում է: Իսկ Մ6-ի մասում սննդի կետ կա, որտեղ մեքենաներ են կայանում, եթե մեծ մեքենաներ են անցնում, դժվարանում է երթևեկը: Հարցը հնարավո՞ր է լուծել:


**Պատասխան-** Խնդրում ենք Ձեր առաջարկները գրավոր ուղարկել: Նախագծային կազմակերպությանը կտրվեն Ձեր առաջարկները:

**9. Հարց.** Ծրագրի իրականացման ընթացքում արտանետումները վերահսկվելու՞ են: Ինչ պիտի արվի, եթե արտանետման մակարդակը բարձր է ընդունելի նորմերից: Պատասխան. Հատուկ ընկերությունը (Տեխնիկական վերահսկողության ընկերությունը) կվարձվի շինարարության ընթացքում արտանետումների, փոշու եւ աղմուկի մակարդակի մոնիտորինգի համար: Կապալառուի պայմանագրով համապատասխան մեքենաների և սարքավորումների մատուցումը կվերանայվի, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել այդ խնդիրը և ապահովել արտանետումների, փոշու և աղմուկի ընդունելի մակարդակները: Եթե մոնիտորինգի արդյունքում հայտնաբերվի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի

անհամապատասխանություն, Կապալառուն կտուգանվի, մի քանի տուգանքներից հետո Պայմանագիրը կարող է դադարեցվել:

Հանդիպումը ավարտվել է 13.50:

***Հանրային լսման լուսանկարներ***



Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն  
ՊՈԱԿ

Transport project implementation organization SNCO

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման  
լրացուցիչ 2-րդ ֆինանսավորման առաջարկվող ծրագրի  
Հանրային իրազեկման խորհրդատվություն

2-nd Additional Financing for Lifeline Roads Network  
Improvement program  
Public consultation

Փետրվարի 22, 2019

February 22, 2019

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ/ ATTENDANCE LIST

|     | Մասնակցի անուն, ազգանուն | Կազմակերպություն | Պաշտոն                    | E-mail              | Չև. համար     |             |
|-----|--------------------------|------------------|---------------------------|---------------------|---------------|-------------|
| 1.  | Գրիգորյան Երան           | Գրիգորյան Երան   | Գրադարանի տնօրեն          | 2047-01@armnet.am   | 093-751-157   | [Signature] |
| 2.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 093 57 51 09  | [Signature] |
| 3.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 075801263     | [Signature] |
| 4.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 09312113      | [Signature] |
| 5.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 077-77-07-76  | [Signature] |
| 6.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 094 54 09 00  | [Signature] |
| 7.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 093 26 26 64  | [Signature] |
| 8.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 91 15 31 00   | [Signature] |
| 9.  | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 093-1962 0000 | [Signature] |
| 10. | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 077 56 13 72  | [Signature] |
| 11. | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 091-588896    | [Signature] |
| 12. | Գրիգորյան Կարեն          | Գրիգորյան Կարեն  | Գրադարանի տնօրենի տեղակալ | g.khachat@yandex.ru | 095 000057    | [Signature] |



|     | Մասնակցի անուն, ազգանուն | Կազմակերպություն | Պաշտոն           | E-mail                      | Հեռ. համար   |   |
|-----|--------------------------|------------------|------------------|-----------------------------|--------------|---|
| 13. | Հարություն Հարությունյան | «ՏՕԻԿ» ՊՈԱԿ      | Կենտրոնի ղեկավար | vardan.m.karapetyan@mail.ru | 0-95-111-755 |  |
| 14. | Ռուբեն Վեդուրյան         | «ՏՕԻԿ» ՊՈԱԿ      | Կենտրոնի ղեկավար | ruben.avagyan@trio.am       | 0-95-111-275 |  |
| 15. | Արմեն Բրաչյան            | «ՄՕԻԿ» ՊՈԱԿ      | ՎՊՆ Տնօրեն       | armen.kocharyan@LP10.am     | 0-95-111-268 |  |
| 16. | Միքայել Զեփուկյան        | «ՄՕԻԿ» ՊՈԱԿ      | ՎՊՆ Տնօրեն       | mikael.zephukyan@LP10.am    | 0-95-111-244 |  |
| 17. | Լիլիթ Գրիգորյան          | «ՄՕԻԿ» ՊՈԱԿ      | Կենտրոնի ղեկավար | lilit.grigoryan@tpio.am     | 093-51-71-12 |  |